

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏ
ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ № 73-15

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ
ՎՈՐՈՇԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

63 MAR 2010

ԽՍՀՄ ՀԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՐԻԱՏ
ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

368

2-99

ՀՐԱՀԱՆԳ № 73-15

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ
ՎՈՐՈՇԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 փետրվարի 1939 թ.

ТССР дәүләт китапханасы
ГОСБИБЛИОТЕКА ТССР
Инв. № 3163 V3.

ՅԵՐԵՎԱՆ

1940

Պատ. խմբագիր՝ Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
 Լեզվական խմբագիր՝ Գ. ՇԻՇՄԱՆՅԱՆ
 Տեխ. խմբագիր՝ Ա. ՈՀԱՆՅԱՆ
 Քարգմանիչ՝ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
 Սրբագրիչ՝ Կ. ԽԱՀԱՏՐՅԱՆ



42817-63

Գլխավոր լրագրող՝ 1127, Պատվեր № 250 տիրաժ 500

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի—65.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Դյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրական վնասների ժամանակին և ճիշտ վորոշին ու հատուցելը—կուլտուրայի և կառավարության կողմից ապահովագրական մարմինների առաջ դրված քաղաքական և տնտեսական կարևորագույն խնդիրն է հանդիսանում:

§ 1. Դյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրական վնասների վորոշումն ու հատուցումը կատարվում է ապահովագրական ավագ և յենթաշրջանային տնտեսների միջոցով, կոպարային ապահովագրության որենքի, կոպարային և կամավոր ապահովագրությունների կանոնների, կամավոր, գերկոպարային ապահովագրության հրահանգի և սույն հրահանգի համապատասխան:

§ 2. Այս աշխատանքը ճիշտ կատարելու համար ապահովագրական տնտեսները պետք է լավ իմանան ԽՍՀՄ կառավարության, միութենական և ավտոնոմ հանրապետությունների կառավարությունների ու գործադիր կոմիտեների՝ գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրական հարցերի մասին յեղած վորոշումները, տվյալ վայրի համար պարտադիր ազդրոմիական կանոնները, ցանքերի պլանները, ցանքերի և բերքի դրությունը: Ապահովագրական տնտեսները պարտավոր են մշտական կապ պահպանել տեղական հողային և գյուղատնտեսական կուլտուրաների աշխատանքը վարող մյուս մարմինների, փորձական և ուղեբերվող օգնական կայանների, գյուղատնտեսների հետ, ոգտագործել ՄՏԿ, մթերող որգանների նյութերը, իրենց նախաձեռնություններ և ապահովագրական ախտիվի հայտարարությունների հիման վրա կատարել կուլտուրաների ցանքի զննություններ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել աշնան ցանքերի, հատուկ և տեխնիկական կուլտուրաների, ինչպես նաև կամավոր (գերկոպարային) կարգով ապահովագրված կուլտուրաների հսկողության վրա:

II. ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅԵՂԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄԸ: ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

§ 3. Ապահովագրական ավագ տեսուչը **ֆլառների մասին ապահովագրվողներից հայտարարություններ ստանալիս պարտավոր է՝**

ա) հայտարարությունը գրանցել գյուղատնտեսական կուլտուրաների ֆլառների մատյանում:

բ) տեղի ունեցած գյուղատնտեսական կուլտուրաների ֆլառի կամ կորուստի մասին անմիջապես հայտնել շրջանային ապահովագրական հանձնաժողովի նախագահին և ապահովագրական վերադաս մարմինն, մատնանշելով ֆլառի պատճառներն ու ժամանակը, կոլտնտեսությունների և գյուղերի թիվը, վորոնց ցանքսերը ֆլառվել են, ֆլառված տարածության չափը, նույնպես և այն տարածության չափը, վորի վերաբերմամբ ֆլառի առթիվ հարկավոր է շտապ կերպով ակտ կազմել:

Գերլիմիտային ֆլառների դեպքում ապահովագրական ավագ տեսուչը հայտնում է այդ տեղեկություններն ապահովագրական վերադաս մարմինն, հետագրով:

գ) մշակել ֆլառների մասին ակտեր կազմելու պլան (նշելով յուրաքանչյուր ակտը կազմելու ժամանակը և այն անձանց, վորոնց հանձնարարված է այդ աշխատանքը) և ներկայացնել այդ պլանը շրջանային ապահովագրական հանձնաժողովի նախագահին ի հառատություն:

ԽՍՀՄ Ֆինոնկոմատի 1939 թվի ոգոստոսի 31-ի № 475/181 հրամանով, Պետապի մարմինների համար սահմանված են ինչպես պարտադիր, նույնպես և կամավոր կարգով ապահովագրված գյուղատնտեսական կուլտուրաների մեկ ապահովագրական դեպքից առաջացած ֆլառներն ինքնուրույն կերպով լուծարելու և վճարելու վերաբերյալ հետևյալ լիմիտները:

1) Միութենական հանրապետությունների Պետապի վարչությունների համար 600 հազար ռուբլի:

2) Յերկրամասային, մարզային և ԱԽՍՀ Պետապի վարչությունների համար 400 հազար ռուբլի:

3) Պետապի ոկրուգային տեսչությունների համար . . 100 հազար ռուբլի:

4) Պետապի շրջանային (քաղաքային) ապահովագրական տեսչությունների և քաղաքային վարչությունների համար 50 հազար ռուբլի:

Ծանոթություն.—Ապահովագրական մեկ դեպք առելով հաճացվում է գյուղատնտեսական կուլտուրաների բերքի մեկ տարերային աղետից միաժամանակ տեղի ունեցած կորուստը. Որինակ՝ Մոսկվայի մարզի Կլինսկի շրջանում 1938 թ. հուլիսի 10-ին 5 կոլտնտեսությունների և 200 կոլտնտեսականների տնտեսությունների ցանքսերը կարկտահարվեցին: Տվյալ ֆլառը հարկավոր է համարել մեկ ապահովագրական դեպք:

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՈՒՐԱՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԻ ԱԿՏԵՐԸ ՅԵՐԲ ՅԵՎ ՈՒՄ ԿՈՂՄԻՑ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ

§ 4. Գյուղատնտեսական կուլտուրաների ֆլառների վերաբերյալ ակտերի կազմումը կատարվում է հետևյալ կարգով:

ա) այն դեպքում, յերբ յենթաշրջանային ապահովագրական տեսչի կողմից ապահովագրվող տնտեսությունների գյուղատնտեսական կուլտուրաների, մի տարերային աղետից միաժամանակ տեղի ունեցած ֆլառը (որինակ՝ կարկտահարությունից, ցրտահարությունից և այլն) չի գերազանցում 2 հազար ռուբլուց, ֆլառի վերաբերյալ ակտերը կազմվում են յենթաշրջանային ապահովագրական տեսչի միջոցով:

բ) 2 հազար ռուբլուց բարձր, բայց շրջանային ապահովագրական տեսչությունների համար վորոշված լիմիտի սահմաններում, գյուղատնտեսական կուլտուրաների ֆլառների ժամանակ, ակտերը կազմվում են անձամբ ապահովագրական ավագ տեսչի միջոցով կամ նրա հանձնարարությամբ ու նրա հակողության տակ համապատասխան յենթաշրջանային տեսուչների միջոցով:

գ) Շրջանային ապահովագրական տեսուչների համար սահմանված լիմիտից բարձր ֆլառների ժամանակ, ֆլառները վորոշելու և հատուցելու աշխատանքը կատարվում է ըստ պատկանելույն՝ պետապի մարզային (յերկրային) հանրապետական վարչության ներկայացուցչի միջոցով, շրջանի ապահովագրական տեսուչների մասնակցությամբ:

Բոլոր դեպքերում գյուղատնտեսական կուլտուրաների ֆլառների մասին ակտեր կազմվում են ապահովագրվողի և

գյուղատնտեսի պարտադիր մասնակցությամբ, ընդ վորում, կոտնտեսության ներկայացուցիչը պետք է լինի վարչության նախագահը կամ դրա համար հատկապես լիազորված վարչության անդամը, իսկ կոտնտեսականների, ինչպես նաև այլ տնտեսութունների ապահովագրվողների ներկայացուցիչը լինելու յե տնտեսության գլխավորը կամ նրա ընտանիքի չափահաս անդամը:

§ 5. Այն դեպքերում, յերբ ակտերը կազմվում են հատուկ տեխնիկական կուլտուրաների (բամբակի, ծխախոտի, այգիների բերքի, խաղողի այգիների և այլն) փչացման կամ ֆլասավելու մասին, անհրաժեշտ է այդ կուլտուրաների մասնագետների մասնակցությունը:

§ 6. Վնասները ճշտորեն վորոշելու և հատուցելու նպատակով ապահովագրական տեսուչն այդ աշխատանքը պետք է կատարի լայն հասարակական հրապարակայնության պայմաններում:

Դրա համար ապահովագրական տեսուչը ֆնասները վորոշելու գործին պետք է մասնակից անի գյուղխորհուրդների ներկայացուցիչներին, նույնպես և գյուղատնտեսությունը լավ իմացող, առաջավոր կոտնտեսականներին (գյուղական խորհուրդների հանձնարարությամբ):

Ակտը ճիշտ կազմելու համար պատասխանատու յեն հանդիսանում նրա կազմելուն մասնակցություն ունեցող բոլոր անձինք: Կեղծ ակտեր կազմելու համար մեղավորները կյենթարկվեն դատական քրեական պատասխանատվության:

§ 7. Վնասի պատճառները և չափը վորոշելու աշխատանքը սկսելուց առաջ, ապահովագրական տեսուչը պարտավոր է ապահովագրվողին, գյուղատնտեսին և հրավիրված մյուս անձանց պարզաբանել ակտը կազմելու ժամանակ նրանց առաջ դրված խնդիրները և իրենց պատասխանատվությունը:

§ 8. Ապահովագրված գյուղատնտեսական կուլտուրաների փչացման կամ ֆլասավելու մասին ակտը պետք է կազմվի հետևյալ ժամկետներում՝

ա) Ապահովագրական տեսչի կողմից ֆլասի մասին հայտարարությունն ստանալու օրվանից 5 օրվա ընթացքում, յեթե ապահովագրվողը հայտնել է տուժված կուլտուրայի վերացանքի (տեղ-տեղ ցանկելու—պոդոս) կամ շուտափուլթ բերքահավաքի անհրաժեշտության մասին:

Վնասների մասին ակտը կազմելու մատնանշված ժամանակ ժամկետը (5 օր) կրկնապատկվում է Ղազախական, Կիրգիզական, Տաճիկական, Թուրքմենական, Ուզբեկական, Կարելո-Ֆինական ԽՍՀ-ներում, Արխանգելսկի, Իրկուտսկի, Մուրմանսկի, Նովո-Սիբիրսկի, Ուսկոլսկի, Պերմի, Սվերդլովսկի, Չելյաբինսկի յերկրամասերում, Բուրյատ-Մոնղոլական, Կոմի և Յակուտական ԱԽՍՀ-ներում:

բ) Յեթե ապահովագրվողի հայտարարության մեջ նշում չկա վերացանի կամ շուտափուլթ բերքահավաքի անհրաժեշտության մասին, այսինքն՝ յեթե գյուղատնտեսական կուլտուրայի երբը տուժել է մասնակի կերպով և այն ել մինչ հասունացման ուղիքը, տեսուչը 7 օրվա ընթացքում, իսկ առանձին վայրերում (տես վերը)՝ վոչ ուշ, քան 14 օրվա ժամկետում, գյուղատնտեսի և ապահովագրվածի հետ միասին պետք է կատարի տուժած տարածության նախնական զննությունը:

Այդ դեպքերում կազմվում է միայն նախնական զննության ակտ, իսկ ֆլասի մասին վերջնական ակտը կազմվում է շրջանային ապահովագրական հանձնաժողովի կամ ապահովագրական վերադաս օրգանի կողմից նշանակված ժամկետներում:

Նման դեպքերում հացահատիկային կուլտուրաների վերջնական ակտ կազմվում է հատիկը լցվելու սկզբից (կաթնային հասունություն) և նրա լրիվ հասունացման միջև յեղած ժամանակամիջոցում, իսկ տեխնիկական և հատուկ կուլտուրաների՝ բերքի հասունանալն սկսվելու և վերջանալու միջև յեղած ժամանակամիջոցում:

Յեթե զննության ընթացքում կհաստատվի, վոր բույսերը բոլորովին փչացել են, ինչպես նաև յեթե փչացել է բերքի հիմնական արտադրանքը (պրոդուկտ) և ֆլասված գյուղատնտեսական կուլտուրան չպետք է ոգտագործվի իր ուղղակի նպատակին. որինակ՝ յեթե հաճաքը պիտի հնձվի իրրե խոտ կամ օրլոս կամ յեթե վերածված է անասունների արոտի, ապահովագրական տեսուչը պետք է ֆլասի մասին վերջնական ակտ կազմի:

գ) Յեթե ֆլասվել են բանջարանոցային և բոստանային կուլտուրաները, ինչպես և պտղատու այգիների, հատապտուղների և խաղողի այգիների բերքը, տեսուչը նախնական զննության ակտը կազմելու համար պետք է մեկնի վոչ ուշ, քան նրա կողմից ֆլասի մասին հայտարարություն ստանալու հաջորդ օրը:

§ 9. Նախնական զննության ժամանակ ապահովագրական տեղումը և ՍՆՄ ՖԺԿ-ի կողմից սահմանված ձևի ակտում պետք է գրել աղետի ժամանակի մասին, ապահովագրվողի կողմից ագրոնոմիական կանոնները կատարման, ֆլաթված տարածության չափի մասին տվյալները, թե ինչպիսի տարերային աղետից է ֆլաթվել գյուղատնտեսական կուլտուրան և պետք է տա ֆլաթվածության բնութագիրը: Նախնական զննության ժամանակ բերքի ֆլաթվածության տոկոսը ակտում չի նշվում: Վնասի տոկոսը, ապահովագրական հատուցման հաշվարկը և զանազան լրացուցիչ տեղեկությունները գրանցվում են նույն այդ ակտում՝ տուժած տարածության մասին վերջնական զննություն կատարելիս:

Թրջումից, փթումից, մրսումից և ցրտահարությունից ֆլաթված աշնանացան հացահատիկային կուլտուրաների նախնական զննության ժամանակ, անհրաժեշտ է փորձնական տարածությունների վրա հաշվել և ակտում գրել՝ 1) բույսերի ընդհանուր քանակը, 2) չֆլաթված բույսերի քանակը և 3) թրջումից, մրսումից, փթումից և ցրտահարությունից ֆլաթված բույսերի քանակը:

Ցեթե զննության ընթացքում կհայտնաբերվի ֆլաթատուներից, հիվանդություններից կամ այլ աղետներից փչացած բույսեր, վորոնցից առաջացած ֆլաթի համար Պետապի պատասխանատվություն չի սահմանված, ապա նման բույսերի քանակը նույնպես պետք է ակտում գրել:

Հետագայում, ֆլաթի մասին վերջնական ակտ կազմելիս, այդ տվյալները կարող են ոգտագործվել ֆլաթի տոկոսը վորոշելու համար այն դեպքում, յերբ թրջումից, մրսումից, փթումից և ցրտահարությունից հետո տեղի կունենա յերաշտ կամ վորևե այլ աղետ, վորոնցից առաջացած ֆլաթի համար Պետապի պատասխանատվություն սահմանված չէ:

Իսկ յեթե աշնան ցանքերը թրջվելուց, մրսելուց և փթելուց հետո, այնպիսի յերևույթներ, ինչպես յերաշտ, հիվանդություններ կամ ֆլաթատուներ չեն յիդել, ֆլաթման տոկոսն անպատճառ պետք է վորոշվի դաշտում, բերքահավաքից առաջ՝ ֆլաթի մասին վերջնական ակտ կազմելիս:

§ 10. Միաժամանակ հառունացող մշակույթների ֆլաթների մասին վերջնական ակտ, բոլոր դեպքերում, պետք է կազմվի անպայման մինչև բերքահավաքի սկսվելը:

Տարբեր ժամանակներում հառունացող այն կուլտուրաների, վորոնց բերքահավաքը մի բույսից կատարվում է մի քանի անգամ (որինակ՝ ծխախոտի, բամբակի), ֆլաթի վերաբերյալ վերջնական ակտը կազմվում է վերջին հավաքների (վերջին չանաքի, վերջին քաղի) ժամանակամիջոցում:

§ 11. Ակտը կազմելու աշխատանքն այնպես պետք է կազմակերպել, վորպեսզի վորոշված ժամկետին բերքի հավաքումը վոչ մի դեպքում չձգձգվի:

§ 12. Վնասների մասին վերջնական ակտեր կազմելիս՝ ապահովագրական տեղումը ագրոնոմի, ապահովագրվողի և հրավիրված մյուս անձանց հետ միասին պարտավոր են՝

ա) կատարել ֆլաթված տարածության ուշի ուշով զննություն:

բ) Արդյոք իսկապես տեղի չե ունեցել այն տարերային աղետը, վորից առաջացած ֆլաթի համար տվյալ կուլտուրայի ապահովագրությամբ սահմանված է պատասխանատվություն:

գ) Ստուգել տվյալ վայրի և կուլտուրայի համար պարտադիր ագրոնոմիական կանոնների կատարումն ապահովագրվողների կողմից և վորոշել արդյոք ցանքսի փչանալը կամ ֆլաթվելը հետևանք չի յիդել ագրոնոմիական այդ կանոնները խախտելուն:

դ) Վորոշել ֆլաթված տարածության չափը:

յե) Վորոշել յենթադրական բերքը և նրա արժեքը:

զ) Վորոշել վնասվածության առտիճանը, այսինքն՝ բերքի վոր մասն է փչացել:

§ 13. Կամավոր (դերկոպարային) կարգով ապահովագրված գյուղատնտեսական ֆլաթները վորոշելիս, ապահովագրական տեղումը ի լրացումն § 12-ում նշվածի՝ պետք է ստուգել՝

ա) Ապահովագրությունը կնքելիս ապահովագրական գործակալն արդյոք թույլ չի տվել կամավոր ապահովագրություն ընդունելու, մասին սահմանված կանոնների խախտում, մասնավորապես արդյոք ապահովագրությունը չի կնքված տարերային աղետից հետո կամ ապահովագրման ընդունելու համար սահմանված ժամկետներից հետո, արդյոք չի յիդել 1 հեկտարի ապահովագրական գումարի բարձրացում, տարիքների սխալ կիրառում:

բ) Արդյոք իր ժամանակին են վճարված կամավոր ապահովագրության ապահովագրական վճարումները:

դ) Տվյալ կուլտուրայի, ինչպիսի ընդհանուր տարածութիւն կա ապահովագրովորի տնտեսութեան մեջ և արդէոք նա համապատասխանում է կամավոր ապահովագրութեամբ ապահովագրված տարածութեանը, թե վոչ:

Նման ոտուգմամբ հայտնաբերված սխալները մանրամասնորեն պետք է գրված լինի ակտում:

Ապահովագրութեան կնքման ճշտութիւնն ոտուգելու համար, տեսուչը, կուլտուրայի մեկնելուց առաջ, պետք է կամավոր ապահովագրութեան հայտարարութիւնից ապահովագրված ֆնամված ցանքսի հիմնական տվյալների մասին քաղվածքներ անի՝ պետք է նշի ապահովագրութեան կնքման ժամանակը, կուլտուրայի անունը, ապահովագրված տարածութիւնն ըստ յուրաքանչյուր կուլտուրայի մեկ հեկտարի ապահովագրութեան կողմից մուծված վճարումները և նրանց ժամանակը:

Տեսչի և հաշվապահի կողմից ոտորագրված քաղվածքը պետք է կցվի ֆնամի վերաբերյալ ակտին:

IV. ՅԱՆՔՍԵՐԻ ՓԶԱՅՄԱՆ ԿԱՄ ՎՆԱՍՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

§ 14. Վնասների մասին ակտեր կազմելու ժամանակ հատուկ ուշադրութիւն պետք է դարձվի ցանքսերի փչանալու կամ ֆնամվելու պատճառները վորոշելու վրա:

Ա. ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

§ 15. Կարկտահարութեան փաստը վորոշվում է ֆնամված ցանքսերը զննելու միջոցով:

Գյուղատնտեսական կուլտուրաներին կարկտահարութեան պատճառած ֆնամները չափազանց բազմազան են՝ հասկի (որինակ՝ հաճարի, ցորենի, գարու) կամ հուրանի վորդկոյգիկի (որինակ՝ վարսակի, կորեկի) լրիվ կամ մասնակի պոկում, փուջ-դատարկ հասկերի գոյացում (հասկերի ոպիտակում), մեջ ընդմեջ հատիկակալում (չերիզգերնիցա), ցորունի լրիվ կամ մասնակի կոտրում, ցորունի ճեղքում, տերեւի թիթեղիկի լրիվ կամ մասնակի պոկում, տերեւների ծակում, շիվերի պոկում կամ կոտրատում, ծաղիկների և պտուղների թափում, կարկտի բծեր—

ցորունների, տերեւների, շիվերի, պտուղների վրա և այլ վնասվածքներ:

Բ. ՏԱՐԱՓ ՅԵՎ ՓՈԹՈՐԻԿ

§ 16. Տարափի և փոթորկի ներգործութեան հետեանքով կարող են լինել՝ արմատների լվացում, առանձնապես մատղաշ, չամրապնդված ծիւրերի, արմատների մերկացում, հողի տիղմակալում, հողի վերին շերտի քշում, ավազով, հողով ցանքսի ծածկում, բույսերի վորդոյում, ցորունների և հասկերի կոտրատում, բույսերի պառկում, ծաղիկների, պտուղների թափում:

Նման տարերային աղետ տեղի ունենալու փաստերը (տարափ և փոթորիկ) վորոշվում են ֆնամված գյուղատնտեսական կուլտուրաների զննութեամբ, ինչպես նաև մոտակա ողերեւութաբանական կայանի տվյալների հիման վրա՝ տեղական իշխանութեան ներկայացուցիչների, կուլտուրային և գյուղական հասարակայնութեան պարզաբանումներով:

Փոթորիկի առկայութեան մասին վկայում են նաև ֆնամված տանիքներն ու ցանկապատերը, հացի և խոտի դեղերը և այլն:

Գ. ՅԵՐԱՇՏ

§ 17. Յեթե տեղումների տեղական բացակայութեան, յերկարատե բարձր ջերմաստիճանի կամ չոր քամիների հետեանքով գյուղատնտեսական բույսերը,—չնայած ագրոկանոնների կիրառմանը, հիվանդութիւնների և ֆնամների բացակայութեանը,—ուսնն կարճ և վոչ զարգացած ցորուններ, թափված կամ թառամած տերեւներ, իսկ բույսի ընդհանուր տեսքը չափից դուրս վորդոյմելի յե, ապա յերաշտի ներգործութեան նշանները կարելի յե հաստատված համարել:

Յերաշտի փաստը պետք է հաստատված լինի մոտակա ողերեւութաբանական կայանի տվյալներով:

Դ. ՅՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ՎԻՄԵՐԶԱՆԻՅԵ)

§ 18. Յրտահարութիւն առելով հասկացվում է ցածր ջերմաստիճանի (ուժեղ սառնամանիքների) ներգործութեան հետեւանքով առաջացած ցանքսերի կոտրուտը կամ փչացումը: Աշ-

նանազանի փչացման դեպքեր ալելի հաճախ են պատահում ձմռանը, ձյան աննշան ծածկոցի (շերտի) ժամանակ: Ուստի ցրտահարությունը վորոշելու համար խոշոր նշանակություն ունի նվազագույն ջերմաստիճանի և ձյան ծածկոցի (շերտի) բարձրության վերաբերյալ տվյալները:

Ցրտահարության են վերագրվում նաև հետևյալ դեպքերը՝

1. Տաք յեղանակները սուր կերպով ուժեղ սառնամանիքների փոխվելու հետևանքով աշնան ցանքսերի փչացումը: Նման սուր փոփոխության հետևանքով ել առաջ է գալիս սառած հողի շերտի, բույսերի սեղմումը և դուրս մղումը:

2. Ձյան ծածկոցը (շերտը) նույնպես և հողի վերին շերտը քշող-հեռացնող և ցողունների ստորին մասն ու թփակավան հանգույցները մերկացնող ուժեղ քամու հետևանքով աշնանացանի փչացումը:

Ձորային շրջաններում աշնանացանի փչացումը ցրտահարությունից հնարավոր է նաև դարձանը. յերբեմն աշնանային յերաշտի հետևանքով աշնանացանի ծիլերը դուրս են գալիս ձմռանը ձյունհալոցի ժամանակ կամ վաղ դարձանը: Նման մատուցաշ, չամրացած ծիլերը ցրտերի կրկնության դեպքում, շատ անգամ փչանում են ցրտահարությունից:

ՅԵ. ՄՐՍՈՒՄ (ՁԱՄԱՐՈՉԿԻ)

§ 19. Մրտում (առավոտյան ցրտից) տեղի յե ունենում ջերմաստիճանը դարձանն, ամրանը և աշնանը հանկարծակի սուր կերպով (մինչև 0 և ցածր) իջնելու դեպքում: Մրտումն առաջացնում է բույսերի մասերի (մատղաշ բողբոջների, տերևների, ծաղիկների և այլն) կամ անմիջական բույսերի (պամիդոր, վալուրուկ, բոստանային բույսերի և այլն) մահացում:

Մրտումից վնասված բույսերը խաշված տեսք ունեն, նրանց տերևները գորշանում և չորանում են: Կաթնային հասունացման շրջանում, մրտումից վնասված հացբույսերի հասկերն ունենում են նվաղ հատիկներ և աչքի յեն ընկնում իրենց մոխրա-սպիտակավուն գույնով:

Զ. ՓՏՈՒՄ (ՎԻՊՐԵՎԱՆԻՅԵ): ՍԱՌՑԱՅԻՆ ԿԵՂԵՎ

§ 20. Փտում համարվում է աշնանացանի կիսահալ հողի վրա նստած ձյունի մեծ շերտի տակ փչանալը:

Փտումից փչացած աշնանացանքսերը բնորոշվում են հետևյալ հատկանիշներով՝ դարձանը խիստ կանաչի փոխաբեն դաշտում մնում է միայն բորբոսած տերևների ժուգ թաց թաղիք, աշնանացանի տերևները համարյա ճեպացած են լինում, ընդվորում նրանք չեն մնում ցողունների վրա, այլ պակված են լինում գետնին և հեշտությամբ պոկվում են արաջին իսկ զփուլմից:

Փտումից փչացած բույսերի ցողուններն իրենց գույնով հողից քիչ են տարբերվում:

Սառցային կեղևից փչացած բույսերի չոր տերևները տրորելիս՝ մատների վրա մնում են հողի շատ մասնիկներ, ընդվորում տերևներն ամուր սեղմված են լինում հողին և կարծես կոկված լինեն:

Փտումից փչացած բույսերի արմատները չգելիս՝ հեշտությամբ դուրս են գալիս հողից, հակառակ այն բույսերի արմատների, վորոնք վնասված են լինում զանազան վնասատուներից:

Ե. ԹՐՋՈՒՄ (ՎԻՄՈԿԱՆԻՅԵ)

§ 21. Թրջում (փափկել, կակղել) ասելով հասկացվում է հողի մակերեսի վրա յերկարատև ջուր կանգնելու հետևանքով, ինչպես նաև հողի չափից ավելի խոնավության հետևանքով տեղի ունեցած գյուղատնտեսական կուլտուրաների փչացումը կամ կորուստը:

Բույսերի թրջումը սովորաբար նկատվում է ցածրագիր խորշերում և լեռնահովիտներում, այսինքն ծանր, քիչ ջրաթափանց հողերում և յենթաշերտերում (կավային, կավաավաղային), վորոնք ձյան և անձրևի ջրերն իրենց մեջ յերկար են պահում, ինչպես նաև այլ հողերում, վորտեղ ստորերկրյա ջրերը մոտ են հողի վերնաշերտին:

Թրջումից ցանքսերի խոշոր տարածությունների կորուստներ սակավ են նկատվում—հեղեղումների և գետերի մեծ վարարումների դեպքերում:

Հաճախ փչացումը տեղի յե ունենում անփաս մնացած ցանքսերի մեջ ցրված առանձին-առանձին բծերով (կտորներով): Նման բծերի համար բնորոշիչ հանդիսանում է հողի տիղմակարումը:

Թրջումից փչացած բույսերի տերևներն ամենից հաճախ լինում են գունատ-դեղնավուն գույնի:

§ 22. Փթումից և Թրջումից աշնանացան կուլտուրաների կրած վնասներն իրենց բնույթով չափազանց մոտ են մի քանի միջատների և հիվանդությունների կողմից այդ կուլտուրաներին պատճառած վնասներին:

Միջատների և հիվանդությունների կողմից առաջացած գյուղատնտեսական կուլտուրաների վնասվածքների համար Պետապր պատասխանատվություն չի կրում:

Ուստի անհրաժեշտ է այս կամ այն վնասվածքներն իրարից տարբերել:

Ամենից շատ տարածված վնասատուների թվին են պատկանում՝ շվեդական և հեռախյան ճանճերի Թրթուրները, աշնան սովկայի (աշնան վորդ) Թրթուրը, հացի դյուրադարձիկի Թրթուրը (լարային վորդ կամ վոսկերոտիկ) և դաշտային խխունջը, վորոնց հասցրած վնասներն իրենց բնույթով նման են փտումից և Թրջումից առաջացած վնասներին:

Շվեդական ճանճերի Թրթուրները փայլուն, սպիտակ վորդեր են մինչև 4,5 մմ յերկարությամբ: Յերիտառադ ծիլերի վրա, ձվից դուրս յեկած Թրթուրները մտնում են ցողունի մեջ և սնվում նրա միջուկով:

Վնասման հետևանքով սկզբից թառամում է գագաթի տերևը, այնուհետև ցողունը կամ ամբողջ բույսն է փչանում, յեթե բույսը դեռ չի թփակավել:

Շվեդական ճանճից վնասված դաշտերը ծածկված են լինում բացուտներով (բծերով) և դեղնած-կիսովին չորացած բույսերով:

Յեթե զգուշությամբ ճեղքենք դեղնած բույսը մինչև նրա արմատը, ապա հեշտությամբ կարելի յե նկատել բաց դարչնագույն փոքրիկ բոժոժը, իսկ յերբեմն ել շվեդական ճանճի Թրթուրը: Այդ ճանճի Թրթուրի առաջացրած վնասվածքները նման են Թրջումից առաջ յեկած վնասվածքներին, գերազանցապես աշնանացան ցորենի վրա:

Հետաքննյալն նման.— Հեռախյան ճանճի Թրթուրներից առաջացած վնասվածքներն ամենից ավելի վտանգավոր են աշնանացան և գարնանացան հացաբույսերի ծիլերի համար: Հեռախյան ճանճի Թրթուրներից վնասված բույսերի ծիլերը հաստանում են, կանգ է առնում գագաթի տերևների աճեցողությունը, այ-

նուհետև վրա յե հասնում ամբողջ բույսի դեղնելը և մեռնելը: Հեռախյան ճանճի Թրթուրներն իրենց զարգացման առաջին շրջանում լինում են մինչև 0,8 մմ յերկարությամբ, վորդանման և վարդադույն-դեղին գույնի:

Առաջին մաշկափոխումից հետո նրանք դառնում են իլիկաձև, տափակած, գույնը լինում է կաթնասպիտակավուն մեջտեղից կանաչավուն գծով:

Լառավորդ.— (դյուրադարձիկի Թրթուր—շվեդական բզեզի Թրթուր): Վորդի գույնը դեղին է, Թրթուրը շատ ամուր և դժվարությամբ է կտրտվում: Լառավորդն ուտում է ծիլի միջուկը, վորի հետևանքով վնասված բույսերը դեղնում և հաճախ վոչնչանում են: Աշնանացան կուլտուրաները լարավորդից, շվեդական և հեռախյան ճանճերից վնասվելիս, բույսերի ցողունները, վորոնք համարյա կրծոտված են լինում մինչև հիմքը, հեշտությամբ անջատվում են հողում ամուր նստած արմատներից այն ժամանակ, յերբ Թրջումից կամ փտումից Թուլացած արմատները հողից հեշտությամբ կարելի յե հանել:

Աշնան սովկայի Թրթուրը (աշնան վորդ) մասսայորեն յերևան գալու շեպքում, խոշոր վնասներ է պատճառում աշնանացանին: Թրթուրը լինում է մինչև 50 մմ յերկարությամբ, ունի հողա-մոխրավուն գույն, ճարպային փայլով, անհանգստանալիս՝ ողակաձև է շրջվում:

Թրթուրներից վնասված աշնանացանի դաշտում սկզբում յերևում են սովորաբար նոթրացած ծիլերով առանձին կտորներ: Այդպիսի կտորներ մեծ թվով լինում են սովորաբար միջնակների յեզրերի մոտ և ցածրադիր տեղերում: Մեծ քանակությամբ Թրթուրներ լինելու դեպքում, ցանքներն ավելի շատ են նոթրանում, առաջացնելով մերկ բացուտներ:

Այդ բացուտներն որ ավուր ավելանալով, միանում են և վերջիվերջո ամբողջ մասսիվը մերկ է դառնում:

Աշնանացանի վնասումն սկսվում է սերմերի ծլման մոմենտից, վորոնց ծլերը դեռ հողից դուրս չեկած դրությամբ, Թրթուրներն արդեն սկսում են ուտել նրանց: Յերիտառադ Թրթուրներն ավելի զարգացած ծիլերի տերևներն են ուտում: Չափահաս Թրթուրներն ուտում են ծիլերն ամբողջությամբ, կրծոտելով նրանց թփակալման հանգույցի մոտից:

Դաճոսային հողախխուկ.— Հողախխուկները սնվում են ամենազանազան կուլտուրական բույսերով և մոլախոտերով,

քերելով առաջացնում և տերևի թիթեղիկի վրա զանազան ձևի և մեծության թափանցիկ անցքեր, անձեռնմխելի թողնելով մեծ մասամբ յերակները: Հողախխուռնները հաճախ լիովին ուտում են ծիլերը:

Հողախխուռնների առկայությունը հեշտությամբ կարելի չէ նկատել ըստ բույսերի և հողի վրա թողնված չորացած փայլուն լորձնոտ գծերի:

Հողախխուռնները խոնավասեր են և նրանց առավելագույն քանակությունը նկատվելի չէ տեղումներով լիառատ տարիներին և ցածրագիր խոնավ դաշտերում:

§ 23. Առատ անձրևների հետևանքով առաջացած. ամենից ավելի հաճախ կրկնվող հիվանդությունների թվին են պատկանում կարոտֆելի փտախտը, վորը տարածվում և փոշերից դեպի պալարները և կերի ճակնդեղի սնկային հիվանդությունները:

Վորոշ տարիներին ԽՍՀՄ հյուսիս-արևելյան մի շարք մարզերում աշնան ցանքերը մեծ չափով տուժում են սնկային հիվանդություններից—ակերոցինայից: ԽՍՀՄ մի քանի վայրերում այդ հիվանդությունն անվանում են «ձյունային մանր ձավար» (սնեփնայա կրուպկա): Աշնանացանի այս հիվանդության նշանները հետևյալներն են. դարձանն աշնանացանի ծիլերի տերևների վրա սկզբում յերևան են դալիս սպիտակ, իսկ հետո ակերոցիա-սնկի մուգ-գորշավուն ամուր գնդիկներ:

Այդ գնդիկներն իրենց մեծությամբ և ձևով միների կղկղանքին են նմանվում: Մնկով վարակված տերևները փտում են, իսկ գնդիկները (սկլերոցիա) թափվում հողի վրա:

§ 24. Նկատի պետք է ունենալ, վոր Պետապը պատասխանատվություն չի կրում:

ա) Թեկուզ և առատ խոնավության հետևանքով առաջացած վնասատուներից և հիվանդություններից տուժած ցանքերի վնասների համար:

բ) արմատի վրա հատիկներ ծլելու և բույսերի պառկելու համար (փոթորիկի և հեղեղի հետևանքով բույսերի պառկելու և արմատի վրա հատիկը ծլելու համար Պետապը կրում է պատասխանատվություն):

§ 25. Թըջումից, ցրտահարությունից, փտումից և մրսումից (զամարոզկա) առաջացած գյուղատնտեսական կուլտուրաների վնասները հետևյալներն են:

ա) համատարած, յերբ ամբողջ տարածություն կամ մի մասի ցանքը լիովին փչացել և կամ բոլոր բույսերը վնասվել են:

բ) նոսրացած, յերբ վնասված տարածություն վրա յեղած տուժած (փչացած) բույսերը հերթով հաջորդում են առողջներին:

գ) բծավոր, յերբ վարակված տարածությունները տեղավորված են տարբեր մեծության առանձին բծերով (բացուտներով) ամբողջ տարածության կամ նրա մի մասի վրա:

դ) խառը՝ յերբ նոսրացած ցանքի մեջ ընկած են փչացած ցանքերի զանազան մեծության բծեր:

§ 26. Յեթն կհաստատվի, վոր ցանքերի կորուստը կամ վնասը ծագել և այնպիսի պատճառներից, վորոնցից առաջացած վնասների համար Պետապը պատասխանատվություն չի կրում, այն ժամանակ վնասների մասին ԽՍՀՄ-ի ՖժԿ-ի կողմից սահմանված ձևով ահա չի կազմվում:

Նման դեպքերում ահա ահա տեղեկություն և կազմել մաքուր թղթի վրա, մատնանշելով տուժած կուլտուրան, վնասի պատճառները, տուժած տարածության չափը և նրա վայրը (դաշտի, բրիգադայի և այլնի №№-երը):

Այդ ահաերը պետք է քննության առնվեն շրջանային ապահովագրական հանձնաժողովում:

V. ՏՈՒԺԱԾ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

§ 27. Տուժած ցանքերի և պտղատու տնկիների տարածությունների չափի վորոշումը կատարվում է չափման ժապավենով կամ ուղեկայով չափելու միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի ստույգ գործիքներով:

Տարածության չափի վորոշման ժամանակ, վորպես ոժանդակ նյութ կարող են ոգտագործվել՝ կոլտնտեսությունների և այլ տնտեսությունների հողաշինարարական պլանները, հողերի առհավետ ոգտագործման ահաերը, բնականում գտնվող տնկերի, նեցող ցանքերի տարածության բաժանումներն ըստ վաշտերի, հողակտորների (վանդակների), բազմամյա տնկիների պասպորտիզացիայի տվյալների և այլն:

Ցրված պտղատու տնկիների տարածությունը վորոշվում է



հետևյալ կերպ՝ հաշվվում են բերքատու ծառերի քանակը և ապա ծառերի այդ քանակը վերածվում են հեկտարների, շրջործկոմի նախագահության կողմից, յուրաքանչյուր տեսակ պտղատու տնկիների քանակը տարածություն վերածելու համար հաստատված նորմաների կիրառումով:

Որից ալ՝ Ընդունենք, վոր տվյալ շրջանում պտղատու տնկիները հեկտարների վերածելու նորման, խնձորենու նկատմամբ շրջործկոմի նախագահության կողմից, մեկ ծառի համար սահմանված է 0,01 հեկտար: Տնտեսության մեջ հաշվի չեն առնելով ընդամենը 250 խնձորենի: Վորպեսզի վերոշել այդ խնձորենիների զբաղեցրած տարածությունը, պետք է 0,01 հեկտարը բազմապատկել 250-ով: Այսպիսով, բազմապատկումից ստացված թիվը $0,01 \times 250 = 2,5$ կկազմի տարածությունը հեկտարներով: Ապահովագրական ավագ տեսուչն իր մոտ պետք է ունենա շրջործկոմի նախագահության կողմից հաստատված պտղատու ծառերի հեկտարների վերածվող նորմաները և այդ նորմաներով ավանդի բոլոր յենթաշրջանային ապահովագրական տեսուչներին:

Պտղատու ծառերը հեկտարների վերածվող նորմաների բացակայության դեպքում, ապահովագրական ավագ տեսուչը շրջանային ֆինանսական բաժնի վարիչի միջոցով պետք է շրջործկոմի նախագահության առաջ խնդիր դնի այն մշակելու և հաստատելու համար:

§ 28. Տնամերձ խառը ցանքերն ու տնկիները վնասվելու դեպքում, Պետապը վճարում է վնասներն ինչպես այն տարածությունների, վորը զբաղեցրած են պտղատու տնկիներով, նույնպես և բանջարանոցային կուլտուրաներով զբաղեցրած տարածությունների համար, թեկուզ և վերջինս գտնվելու լինի պտղատու տնկիների միջև—շարքերում: Պտղատու տնկիների տարածությունը վորոշվում է, նրանց թիվը տարածության վերածելու յեղանակով, համաձայն սահմանված նորմաների, իսկ բանջարանոցային կուլտուրաների տարածությունը՝ նրանցով զբաղեցրած տարածությունները չափելու միջոցով:

Որից ալ՝ Տնամերձ խառը ցանքերի և տնկիների ընդհանուր տարածությունը հավասար է 0,75 հեկտարի:

Այդ տարածության վրա գտնվում է 25 խնձորենի և 0,6 հեկտար բանջարանոցային ու բոստանային ցանքեր: Ամբողջ տարածությունը կարկտահարված է:

Ընդունենք, վոր խնձորենիների նկատմամբ, մեկ ծառի վերածման նորման սահմանված է 0,01 հեկտար: Նման դեպքում վնասները պետք է վճարել՝ 0,25 հեկտար այդու և 0,6 հեկտար բանջարանոցային ու բոստանային ցանքերի համար:

§ 29. Գյուղատնտեսական կուլտուրաների բծավոր վնասների դեպքում, վնասված տարածությունը կարելի չե վորոշել յերկու ձևով, կամ յուրաքանչյուր վնասված բիծը չափելով, կամ՝ հաշվի չեն առնվում բծերի (բացուտների) քանակը և ապա վերցվում է միջին չափ ունեցող մեկ բիծ ու չափվում է նրա տարածությունը: Բազմապատկելով բծերի քանակը միջին չափ ունեցող բծի տարածության վրա կստանանք վնասված ընդհանուր տարածությունը:

Որից ալ՝ Անանացան ցորենի 4 հեկտար տարածության վրա կան բծավոր վնասվածքներ: Այդ տարածության վրա հայտնաբերված է 10 բիծ, միջին չափ ունեցող բծի տարածությունը հավասար է 600 քառ. մետրի կամ 0,06 հեկտարի: Ամբողջ վնասված տարածությունը հավասար կլինի՝

10×600 քառ. մետր = 6000 քառ. մետրի կամ 0,6 հեկտարի:

§ 30. Գյուղատնտեսական կուլտուրաների խառը վնասվածքների դեպքում օկդրում վորոշվում է վնասված ընդհանուր տարածության չափը, իսկ հետո բծավոր վնասված տարածությունը: Բծավոր վնասված տարածությունը հանվում է խառը վնասված ընդհանուր տարածությունից: Ստացված տարբերությունը՝ կկազմի նորո վնասվածության տարածությունը:

§ 31. Յեթե գյուղատնտեսական կուլտուրաների ցանքերն անհամաչափ են վնասված, ապա այդ կուլտուրայի տարածությունը, բերքի վնասի առաժնայի համեմատ, պետք է բաժանել առանձին մասերի (հողակտորների): Յուրաքանչյուր այդպիսի հողամաս չափվում է առանձին, վորովհետև վնասվածության առաժնայնը պետք է վորոշվի ըստ յուրաքանչյուր հողակտորի:

VI. ԲԵՐԲԻ ՎՆԱՍՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

§ 32. Գյուղատնտեսական կուլտուրաների բոլոր տեսակի ապահովագրությունների համար, բացի սույն հրահանգի § 33-ում մատնանշված դեպքից, Պետապը պատասխանատու չե բերքի հիմնական արտադրանքի քանակական կորուստների համար: Այդ նշանակում է, վոր հացահատիկային ցանքերի ապահովագրման

դեպքում, Պետապը պատասխանատու չե հատիկի համար, իսկ յերկրորդական արտադրանքի՝ դարմանի, մղելի համար պատասխանատու չե: Յուղատու կուլտուրաների ապահովագրման դեպքում Պետապը միայն սերմերի համար ե պատասխանատու. ճակընդեղի ապահովագրության դեպքում՝ պատասխանատու չե արմատների համար, և պատասխանատվություն չի կրում տերևներ (փոշերի) համար:

Յերկարացողուն կտավհատի և կանեփի ապահովագրման դեպքում, Պետապի պատասխանատվությունը սահմանված ե ինչպես ցողունի, նույնպես և սերմի համար:

Մասնանշվածին համեմատ, յեթե որինակ՝ կարկտահարության հետևանքով տարեկանի բերքը լիովին (100%) վոնչացել ե և հողային որգաններն ապահովագրվողի հետ միասին վորոշում են հանել՝ տարեկանը հնձել վորպես անառնակեր, ապահովագրվողին պետք ե վճարել ապահովագրական վարձատրության լրիվ նորմայի չափով ապահովագրական հատուցում: Ապահովագրական վարձատրության լրիվ նորման միայն այն դեպքում ե վճարվում, յեթե յենթադրական բերքի արժեքը (մինչև տարեկային աղետը) այդ նորմայից ցածր չի յեղել:

Յեթե տարեկային աղետի հետևանքով հիմնական արտադրանքի բերքը փչացել ե վոչ թե ամբողջպես, այլ մասնակիորեն, զնասի հատուցումն ապահովագրվողին պետք ե վճարել զնասի վերաբերյալ սահմանված տոկոսի համաձայն: Որինակ՝ յեթե տարեկանի բերքը կարկտահարությունից փչացել ե 90%-ով և ապահովագրվողը տարեկանը հնձել ե վորպես անառնակեր, զնասը վճարվում ե զնասվածության 90%-ից յենեղով:

§ 33. Այգիների, հատապտուղների և խաղողի այգիների բերքը կարկտահարությունից ապահովագրելու դեպքում, զնասները հատուցվում են՝ ինչպես բերքի քանակական կորուստների, այնպես և նրա վորակի իջեցման համար (կարկտահարության հետևանքով պտուղներն ավելի ցածր տեսակի անցնելը): Ժիշտ այնպես ել հատուցվում են կարկտահարությունից ծխախոտի և մախորկայի վորակի իջեցման զնասները, յեթե միայն այդ կարգի հատուցումը սահմանված ե միութենական հանրապետության կառավորության կողմից:

Ծխախոտի, մախորկայի ցանքերի, այգիների, հատապտուղների և խաղողի այգիների բերքը, բացի կարկտահարությունից, մյուս տարեկային աղետներից ապահովագրելու դեպ-

քում, Պետապը միայն քանակական կորուստների համար ե պատասխանատվություն կրում:

§ 34. Գյուղատնտեսական կուլտուրաների բերքի զնասման աստիճանի վորոշումը կատարվում ե՝ զնասված հողամասից փաստացի ստացված բերքը համեմատելով այն բերքի հետ, վորը կստացվեր տարեկային աղետ չպատահելու դեպքում, վորպիսի զնասների համար ել ապահովագրական պատասխանատվություն ե սահմանված:

Վնասված տարածության 1 հեկտարից ստացվելիք բերքը, տարեկային աղետ չպատահելու դեպքում, վորոշվում ե հարևան, չզնասված հողամասերի բերքի համեմատ, վորոնք զնասված հողամասերի նման հողային և տնտեսական միատեսակ պայմաններում են գտնվում և նրանց հետ միատեսակ դրության մեջ են գտնվելիս յեղել մինչև տարեկային աղետ պատահելը:

Հարևան, չզնասված հողամասերի բացակայության դեպքում, որինակ՝ յերաշտի դեպքում, փաստացի բերքը, վոր ստացվել ե տարեկային աղետից (յերաշտից) հետո, համեմատվում ե տվյալ տնտեսության մեջ յեղած վերջին յերեք տարիների միջին բերքատվության հետ, ընդվորում, տարեկային աղետների հետեվանքով բերքի սուր իջեցման տարիները հաշվի չեն առնվում:

Տուժած տնտեսության վերաբերյալ յեռամյա տվյալների բացակայության դեպքում, պետք ե յերցնել հարևան տնտեսությունների խմբի միջին յեռամյա բերքատվությունը: Զնասված հողամասերի բացակայության դեպքում, հաշվառելի այս կարգը տարածվում ե բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների վրա:

Ծ ա ն ո թ թ յ ու ն . — Առաջավոր կուլտնտեսությունների վերաբերյալ, վորոնք՝ — շնորհիվ կատարելագործված ագրոտեխնիկայի և աշխատանքի ստախանովական մեթոդների կիրառման, — վերջին տարիների ընթացքում հասել են բարձր բերք ստանալուն, թույլատրվում ե շրջագործկոմների նախագահությունների հատուկ վորոշումներով յենթադրական բերքի հաշվառման համար ոգտադործել վոչ թե յեռամյա, այլ վերջին 1—2 տարվա բերքատվությունը:

§ 35. Գյուղատնտեսական կուլտուրաների բերքի կորուստները վորոշելու համար, գաշտը դիտելով, ամբողջ զնասված տարածությունը բաժանվում ե ըստ միատեսակ զնասվածության

աստիճան ունեցող հողամասերի և չափվում է յուրաքանչյուր հողամասի տարածութունը:

Յուրաքանչյուր այգախի հողամասից վերցնում են փորձ-նակած տարածութուններ և նրանցից բերքը հաշվարկում սովյալ կուլտուրայի համար սահմանված ձևով: Ստացված բերքը կշռվում է:

Ճիշտ այդ ձևով էլ վերցվում են նաև նույնատեսակ, բայց չփնտրված հողամասերում փորձնական տարածութունները: Ստացված բերքը կշռվում է:

Վնասված և չփնտրված հողամասերի փորձնական տարածութունները պետք է վերցնել միևնույն չափի—որինակ՝ 1 քառ. մետր:

Փորձնական տարածութունների քանակը կախված է տու-ժած տարածության մեծութունից: Վերջինս մեծ է տարածութունը, այնքան էլ փորձնական տարածութունների քանակը ավելի պետք է վերցնել:

Պետք է նկատի ունենալ, լոր ավելի ճիշտ արդյունքներ կատարվի այն դեպքում, յերբ վերցվում են փորձնական փոքր տարածութուններ, բայց մեծ քանակությամբ, քան, յեթե վերցվում են մեծ տարածութուններ, բայց քիչ քանակությամբ. որինակ՝ մեկ քառ. մետրից տաս փորձնական տարածութուն-ների վրա բերքի վորոշումն ավելի ճիշտ արդյունքներ կտա, քան 10 քառ. մետրանոց մեկ տարածության վրա:

Վնասված և չփնտրված հողամասերի փորձնական տարածութուններից ստացված բերքի արդյունքների հիման վրա յեն կատարվում բերքի քանակական կորուստների հաշվարկումը. որինակ՝ չփնտրված հողամասի բերքը 1 հեկտարից վորոշված է 10 ցենտներ, իսկ փնտրվածի 1 հեկտարից—8 ցենտներ: Այդ դեպքում 1 հեկտարի բերքի կորուստը կլինի $10 - 8 = 2$ ցենտներ, կամ տոկոսներով՝

$$\frac{2 \times 100}{10} = 20$$

Յեթե հնարավոր չէ փորձնական կախում կատարել, ապա բերքի փնտրվածության տոկոսը կարելի յէ վորոշել փնտրված և անփնտա մնացած հողամասերի փորձնական տարածութունների վրա գտնվող չփնտրված բույսերը հաշվարկելով:

Որինակ՝ Յրտահարությունից փնտրված 1 քառ. մետր հո-

ղամասի վրա, ընդունենք, լոր միջին թվով գտնվում է 100 բույս, նույն տեսակ, բայց չփնտրված հողամասի վրա—250 բույս:

Յրտահարությունից առաջացած կորուստները 1 քառ. մետրի վրա կազմում են 150 բույս: Վնասվածության տոկոսը հալասար է՝

$$\frac{150 \times 100}{250} = 60$$

Շարքացան կուլտուրաների (ցորեն, տարեկան, գարի, վար-սակ և այլն) բերքը և փնտրի տոկոսը վորոշելու համար վերցվում են փորձնական տարածութուններ, իսկ միջաբային մշակման կուլտուրաների (բամբակ, ծխախոտ, տղկանեխի և այլն) հա-մար, հարմար է վերցնել վոչ թե տարածութուններ, այլ շար-քեր:

Ինչպես տարածութունների, նույնպես և շարքերի ընտ-րությունը պետք է տեղի ունենա մեխանիկորեն: Որինակ՝ տա-րածությունը վերցվում է յուրաքանչյուր 100, 150, 200 մետրից հետո, իսկ շարքերից ոգտվելու դեպքում, պետք է վերցնել ամեն մի 30, 40 կամ 50 և այլ շարքերից հետո:

§ 36. Մատղաշ ծիլերի փնտրվածության աստիճանը վորո-շելիս (կրկնացան կամ վերացան կատարելու անհրաժեշտության դեպքում), ապահովագրական տեսուչը՝ գյուղատնտեսի և ապահո-վագրվողի հետ միասին, փնտրի չափը վորոշում է, փնտրված հո-ղամասի փորձնական տարածության վրա փչացած և առողջ բույսերը հաշվելու միջոցով կամ փնտրված հողամասի և չփնտ-րված, նրա նման հողամասի փորձնական տարածութունների վրա առողջ բույսերը հաշվելու միջոցով:

Որինակ 1. Վնասված հողամասի փորձնական տարածու-թյան վրա կար ընդամենը 300 բույս, վորից 240-ը փչացած և 60-ն առողջ:

Վնասվածության տոկոսը հալասար կլինի՝

$$\frac{240 \times 100}{300} = 80$$

Որինակ 2. Վնասված հողամասի 1 քառ. մետր փորձնա-կան տարածության վրա գտնվում է 50 հատ առողջ բույս, ցըր-տահարված բույսերի մնացորդները չեն պահպանվել:

Միատեսակ, բայց չփնտրված հողամասի հենց այդպիսի տա-

բաժնեթյան վրա գտնվում է 250 բուլս: Այստեղից փչացած բուլսերի քանակը հավասար է 200-ի, կամ տոկոսներով՝

$$\frac{200 \times 100}{250} = 80$$

§ 37. Գյուղատնտեսական յուրաքանչյուր կուլտուրայի համար բերքի կորուստի չափը վորոշվում է առանձին:

Յեթե ապահովագրվողի վորեն գյուղատնտեսական կուլտուրա մի քանի հողամասերում է տեղավորված, ապա բերքի ֆնասովածության տոկոսը յուրաքանչյուր հողամասի համար վորոշվում է առանձին և գրանցվում ակտում, վորից հետո միայն վորոշվում է գրվում է ամբողջ տարածության բերքի ֆնասման միջին կշռվածության տոկոսը:

Որից և կ' հոլտնտեսության առաջին հողամասում 50 հեկտար վարսակ է ֆնասվել 30°-ով և յերկրորդ հողամասում — 200 հեկտար վարսակը 25°-ով: Տվյալ դեպքում ամբողջ տարածության ֆնասման միջին կշռային տոկոսը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$\begin{array}{r} 50 \times 30 = 1500 \\ 200 \times 25 = 5000 \\ \hline \text{Հնդամենը՝} \quad 250 \quad 6500 \end{array}$$

Այստեղից ել բերքի ֆնասման միջին կշռային տոկոսը հավասար կլինի՝ $6500 : 250 = 26$:

§ 38. Յեթե տարերային աղետը պատահելու պահին ֆնասված տարածություններից բերքի մի մասը հովաքված է յեղել և յեթե աղետից առաջացած ֆնասների համար Պետապը պատասխանատու չե, ապա բերքի այդ հովաքված մասը հաշվի չի առնվում, ընդհանուր յենթադրական բերքը (վորը կլինեք տարերային աղետ չպատահելու դեպքում) և փաստացի ստացված բերքը հաշվելու ժամանակ:

Այսպես, յեթե կանեփի պոսկոնը հովաքելուց հետո կանեփը ֆնասվել է, ապա ինչպես ֆնասված, նույնպես և անֆնաս մնացած հողամասերի բերքը պետք է հաշվի առնել նաև հովաքած պոսկոնի բերքը վորոշելիս (տես § 51):

§ 39. Այն գյուղատնտեսական կուլտուրաները, վորոնք տարեկան մի քանի անգամ են բերք տալիս (յերեքնուկ, առվույտ),

նրանց կորուստները հաշվելիս պետք է ամբողջ տարվա բերքը նկատի առնենալ:

Որից և կ' Յերեքնուկի յերկրորդ քաղը, վորը վորպես խոտեր ոգտագործվելու, հուլիս ամսին կարկտից ֆնասվեց: Կարկտից տուժած հողամասի յերկրորդ քաղի բերքը վորոշված է 1 հեկտարից 10 ցենտներ խոտ, համայնման չֆնասված հողամասում բերքը վորոշված է 1 հեկտարից 20 ցենտներ խոտ: Թե առաջին և թե յերկրորդ հողամասում առաջին քաղից, 1 հեկտարից ըստացվիլ է 25 ցենտներ խոտ:

Անֆնաս մնացած հողամասի ամբողջ բերքը հավասար է՝ $25 \text{ ց.} + 20 \text{ ց.} = 45$ ցենտների:

Իսկ ֆնասված հողամասինը՝ $25 \text{ ց.} + 10 \text{ ց.} = 35$ ցենտների:

Բերքի կորուստը ցենտներներով հավասար է՝ $45 \text{ ց.} - 35 \text{ ց.} = 10$ ցենտների, իսկ տոկոսներով՝

$$\frac{10 \times 100}{45} = 22,2 \text{ կամ կլոր թվով՝ } 22:$$

§ 40. Այն դեպքերում, յերբ բերքի պակասումն առաջացիլ է վոչ միայն այնպիսի պատճառներից, վորոնցից առաջացած ֆնասների համար ապահովագրական պատասխանատվություն է սահմանված, այլ և յեթե բերքն իջել է նաև այլ պատճառներից, ապա յենթադրական բերքը վորոշելու համար անհրաժեշտ է պարզել, թի այդ պատճառների յուրաքանչյուրից բերքի վորման է փչացել:

Շրջանային ապահովագրական հանձնաժողովն ակտերը քննելիս և հաստատելիս պարտավոր է հանգամանորեն օտուզել ֆնասի, Պետապի կողմից վճարվելիք և վճարման վոչ յենթակա մասերի բաժանման ճշտությունը:

Որից և կ' 1. Յորենի ցանքսերը սկզբից տուժել են ֆնասատուներից, իսկ հետո կարկտահարությունից: Վնասատուներից առաջացած ֆնասների համար Պետապը պատասխանատվություն չի կրում: Ապահովագրական տեսչի, գյուղատնտեսի և կուլտնտեսության ներկայացուցչի միջոցով պարզված է, վոր տուժած հողամասերում բուլսերի 25°-ը ֆնասատուներից է փչացել, իսկ մնացած մասը կարկտահարության է յենթարկվել: Վնասատուներից և կարկտահարությունից ֆնասված հողամասի բերքը 1 հեկտարից հավասար է 5 ցենտների: Թե կարկտահարու-

թյունից և թե ֆնասատուններից անֆնաս մնացած նույնաման հողամասի բերքը 1 հեկտարից վորոշված է 12 ցենտներ:

Այնքան, վորքան բույսերի 25%-ը փչացել է ֆնասատուններից, ապա յենթադրական բերքը, վորը պետք է լիներ ֆնասված տարածության վրա կարկտահարության բացակայության դեպքում, կազմում է 12 ցենտների 75%-ը, կամ 9 ցենտներ՝ 1 հեկտարից:

Այդ բերքը՝ մեկ հեկտարից 9 ցենտներ, պետք է ընդունել կարկտահարությունից առաջացած ֆնասը հաշվելու համար: Տվյալ դեպքում կարկտահարության հետևանքով բերքի իջեցումը հավասար կլինի՝ 9 ց.—5 ց.=4 ցենտներ 1 հեկտարից, կամ 1 հեկտարից 9 ցենտներ յենթադրական բերքի 44,4% (կորացրած 44%):

Որից ալ 2. Ցորենի ցանքերը սկզբում տուժել են ցրտահարությունից, իսկ հետո հունիս-հուլիս ամիսներին՝ ֆնասատուններից, ընդվորում դարնանային նախնական զննության ընթացքում ցրտահարությունից առաջացած ցանքսիրի ֆնասվածության տոկոսը նշանակված չի յեղել:

Վնասների վորոշումը կատարվում է մինչև բերքահավաքը:

Ընդունենք, վոր վոչ ցրտահարությունից և վոչ էլ ֆնասատուններից չֆնասված հողամասում, միջին թվով 1 քառ. մետրի վրա կա 200 բույս, իսկ ցրտահարությունից և ֆնասատուններից ֆնասված հողամասում կա առողջ բույսեր 80 հատ և բացի այդ, կան նաև 50 բույսերի մնացորդներ, վորոնք վոչնչացել են ֆնասատուններից: Նման ֆնասատունների բացակայության դեպքում ցրտահարությունից հետո պետք է 1 քառ. մետրի վրա լինեն 80+50=130 բույս: Այսպիսով ցրտահարությունից առաջացած կորուստը վորոշվում է 70 բույս (200—130): Հետևապես ցրտահարության հետևանքով առաջացած ֆնասվածության տոկոսը հավասար կլինի՝

$$\frac{70 \times 100}{200} = 35$$

Այնուհետև մի քանի վազերից վողկույզները կտրելով, ամբողջովին փչացած վողկույզները դեն են շարտվում, իսկ մնացածը համընդուն հետո կշռվում է: Ստացված քաշը բաժանելով վողկույզների թվի վրա, պարզվում է կարկտահարությունից հետո ստացված մեկ վողկույզի փաստացի բերքի միջին քաշը:

Այդ միջին քաշը բազմապատկելով չվնասված և մասամբ վնասված բոլոր վողկույզների թվի վրա, վորոշում ենք վերցված վազերի խաղողի փաստացի բերքը:

Այնուհետև չվնասված վողկույզները ջրկելով, համընդուն են և նույնպես կշռվում: Ստացված կշիռը բաժանելով չվնասված վողկույզների թվի վրա կստանանք չվնասված վողկույզի միջին քաշը:

Չվնասված վողկույզի քաշը բազմապատկելով բոլոր վողկույզների (չվնասված, վնասված և ամբողջովին փչացած) թվի վրա, վորոշում ենք մինչև կարկտահարությունը յեղած յենթադրական բերքը: Բերքի թերահավաքը յենթադրական բերքի համեմատությամբ հաշվարկված տոկոսներով, կկազմի վնասվածության տոկոսը:

Որիմակ.— Կոլտնտեսության մեջ փոթորիկից տուժել է 0,5 հեկտար խաղողի այգի: Չննության և հաշվումների համար վերցված է 50 վազ:

Հաշվելիս նրանց վրա հայտնաբերված է չվնասված ու մասնակի վնասված վողկույզներ 400 հատ և լիովին փչացած՝ 100 հատ, իսկ ընդամենը 500 հատ վողկույզ:

4—6 վազերից վողկույզները կտրելով, լիովին փչացած վողկույզները դեն ենք շարտում, մնացած վողկույզները հաշվում և կշռում ենք նրանց: Վորոշում ենք մեկ վողկույզի միջին կշիռը: Ընդունենք, վոր այն հավասար է 200 գրամի: Այդ դեպքում զննության համար վերցված բոլոր 50 վազերի փաստացի բերքը կարկտահարությունից հետո հավասար կլինի՝

$$400 \times 200 \text{ գր.} = 80.000 \text{ գրամի կամ } 80 \text{ կիլոգրամի:}$$

Այնուհետև միայն չվնասված վողկույզները վերցնելով, հաշվում ենք նրանց, կշռում և վորոշում ենք չվնասված վողկույզի միջին քաշը: Ընդունենք, վոր այն հավասար է 300 գրամի: Այդ դեպքում յենթադրական բերքը (մինչև տարերային աղետը) հավասար կլինի՝

$$500 \times 300 = 150000 \text{ գրամի, կամ } 150 \text{ կիլոգրամի:}$$

Բերքի թերահավաքն արտահայտվում է հետևյալ թվերով՝

$$150 - 80 = 70 \text{ կլգ. կամ տոկոսներով՝}$$

$$\frac{70 \times 100}{150} = 46,6, \text{ կամ կլորացրած } 47$$

Կարկտահարությունից առաջացած վնասները վորոշելիս, անհրաժեշտ է վորոշել վնասված և չվնասված հողամասերի բերքի արժեքը, քանի վոր կարկտահարության հետևանքով խաղողի վորակի կորուստների համար ևս Պետապը պատասխանատվություն է կրում:

Դրա համար քաղված խաղողը (բացառությամբ լիովին փչացած վողկույզների) դասավորում ենք ըստ տեսակների համաձայն սահմանված ստանդարտների, յուրաքանչյուր տեսակն առանձին կշռում և հաշվարկում ենք, թե կտրված խաղողի ընդհանուր քաշի նկատմամբ յուրաքանչյուր առանձին տեսակն ինչ տոկոս է կազմում: Ընդունենք, վոր տեսակավորմամբ պարզված է, վոր կա 30% առաջին տեսակի և 70% — յերկրորդ տեսակի:

Յենթադրենք, խաղողի մթերման գներն են՝ 1 կլգ. 1-ին տեսակի համար 1 ռուբլի, իսկ յերկրորդ տեսակինը՝ 55 կոպեկ: Այդ դեպքում փաստացի ստացված 80 կլգ. բերքը կարժենա՝

	0/0 ընդհանուր քաշից	Քանակը կիլոգրամներով	1 կլգ. մթերման գինը ռուբլիներով	Արժեքը ռուբլիներով
Առաջին տեսակ . .	30	24	1,00	24
Յերկրորդ տեսակ .	70	56	0,55	30,8
Ընդամենը . .				54,8

Այնուհետև տեսակավորում և նույն յեղանակով վորոշում ենք չնասված բերքի (150 կլգ.) արժեքը՝

	0/0 բնական նուր քաշից	քանակը կի- լոգրամներով	1 կիլոգրամի միջին արժեքի գինը ռուբլի- ներով	Արժեքը ռուբլիներով
Առաջին տեսակ	65	97,5	1,00	97,5
Յերկրորդ »	35	52,5	0,55	28,88
Ընդամենը՝				126,38

Թերահավաքի արժեքը հավասար է՝
126,38 ռուբ. — 54,8 ռուբ. = 71,58 ռուբլու: Այստեղից ձևավա-
ծության տոկոսը հավասար է՝

$$\frac{71,58 \times 100}{126,38} = 56,6 \text{ կամ կլորացրած } 57$$

Վերը նշված յեղանակով վորոշվում է ձևավածության տո-
կոսը, սակայն բացի այդ անհրաժեշտ է 1 հեկտարի յեղանակա-
րենքի չափն իմանալ: Դրա համար 1 հեկտարի վրա գտնված
բոլոր վազերի թիվն անհրաժեշտ է բազմապատկել մինչև կարկտա-
հարությունը մեկ վազից ստացված խաղողի բերքի միջին քաշի
վրա:

Վերևում բերված որինակում նշված է, վոր կարկտահարու-
թյան բացակայության դեպքում, խաղողի 50 վազերից կհավաք-
վեր 150 կլգ.: Հետևապես մեկ վազից — 3 կլգ.:

Մեկ հեկտար խաղողի վազերի թիվը վորոշվում է, համըն-
կել նրանց՝ փորձնական շարքերում: Մեկ հեկտարի վրա գտնված
վազերի թիվը վորոշելու համար ոգտագործվում է նաև խաղողի
ա գինների պտտությունից հաշվարկի տվյալները:

§ 63. Բանջարանոցային կուլտուրաներ. — Բանջարանոցային
կուլտուրաների բերքի ձևավածության աստիճանը կարելի է
յերկու յեղանակով վորոշել՝

1. Ընտրովի փորձնական տարածությունների (շարքերի)
վրա փչացած և անջնաս մնացած բույսերի քանակը համընկու
միջոցով (տես § 36), և 2. Վնասված ու չվնասված հողամասե-
րի բերքը միմիանց համեմատելու միջոցով:

Առաջին յեղանակը կարելի է կիրառել այն դեպքում, յերբ
վնասի վորոշումը կատարվում է բույսերի դարգացման վաղ շըր-
ջանում և յերբ տարերային աղետի հետևանքով բույսերի մի
մասն ամբողջովին փչացել է:

Տարբեր ժամանակներում հասունացող կուլտուրաների հա-
մար, վորոնց բերքը մի քանի նվազ է հավաքվում (վարունգ,
պամիդոր և այլն) վնասների վերջնական վորոշումը համար է
կատարել վերջին հավաքի ընթացքում:

Այդ դեպքում, ավելի վաղ կատարված հավաքի բերքը վո-
րոշվում է տնտեսության մեջ յեղած փաստաթղթերի (ընդուն-
ման ակտերի, գրքերի գրանցումների և այլն) հիման վրա, իսկ
վերջին հավաքը հաշվի է առնվում փորձնական շարքերի բերքը
հավաքելու և կշռելու միջոցով, վորից հետո կատարվում է մեկ
հեկտարի բերքի վերահաշվարկումը:

Որինակ՝ Վարունգների վերջին հավաքը վնասվել է կարկտից:
Վերջին հավաքի բերքը վորոշելու համար, տուժած և չտուժած
հողամասի զանազան մասերում վերցվում է շարքեր, յուրաքան-
չյուրը 10 մետր յերկարության, վորոնց վրայից բերքը հավաք-
վում և կշռվում է:

Յենթադրենք, վոր 10 մետրանոց շարքի միջին բերքը
վնասված հողամասի վրա կազմում է 1,2 կլգ., իսկ չվնասվածի
վրա՝ 2 կլգ.: Յենթադրական բերքը հնարավոր է նաև վնասված
հողամասի վրա վորոշել, յեթե միայն այդ հողամասում կա
չվնասված վարունգներ:

Դրա համար անհրաժեշտ է հաշվել բոլոր վարունգների
թիվը և վորոշել չվնասված վարունգի միջին քաշը: Ամբողջ վա-
րունգների թիվը բազմապատկելով չվնասված վարունգների մի-
ջին քաշի վրա, կստանանք ամբողջ փորձնական շարքում յեղած
վարունգների (մինչև կարկտահարությունը) յենթադրական բեր-
քի կշիռը:

Մեկ հեկտարի բերքը վերահաշվարկելու համար, պետք է
դուրս բերել մեկ հեկտարի վրա ընկնող շարքերի ընդհանուր
յերկարությունը:

Յենթադրենք շարքերի ընդհանուր յերկարությունը հաշված
է 25000 մետր: Վնասված հողամասի 10 մետրանոց շարքի վա-
րունգների բերքը կազմում է 1,2 կլգ.: Այսպիսով 1 հեկտարի բեր-
քը հավասար կլինի՝ $1,2 \text{ կլգ.} \times 2500 = 3000 \text{ կլգ.}$ կամ 30 ցենտ-

ների, իսկ չփառված հողամասում բերքը կկազմի 2 կլգ. $\times$ 2500 = 5000 կլգ. կամ 50 ցենտներ:

Կոլտնտեսության գրանցումներին պարզվում է, Վոր մինչև վերջին հավաքը (մինչև կարկտահարությունը) 1 հեկտարից ռոտացված է 100 ցենտ. վարունգ: Հետևապես չփառված հեկտարի ընդհանուր բերքը կլինի 100 ց. + 50 ց. = 150., իսկ փառվածինը՝ 100 ց. + 30 ց. = 130 ց.: Մեկ հեկտար բերքի թերահավաքը կազմում է 150 ց. - 130 ց. = 20 ց. կամ տոկոսներով՝

$$\frac{20 \times 100}{150} = 13,3 \text{ կամ կորացրած } 13$$

Բանջարանոցային և բոստանային վաղահաս կուլտուրաները փշանալու կամ փառվելու դեպքում (բաց դաշտում, պարնիկներում և ջերմանոցներում) նրանց փառվածության տոկոսը վորոշելիս, անհրաժեշտ է հաշվի առնել վոչ միայն տարերային աղետից առաջացած կշռային թերահավաքը, այլ և ամբողջ բերքի արժեքի իջեցումը, վորպիսին տեղի յե ունեցել ավելի արժեքավոր հավաքների փշացման և արտադրանքն ավելի ուշ ժամկետներում իջեցված գներով իրացնելու հեռանքով:

Տարերային աղետի հետևանքով արտադրանքի վորակի անկումն ու տեսակայնության իջնումը չպետք է ուշադրության առնել և չպիտի վճարել:

Որինակ՝ Հունիսի 28-ին բաց դաշտ վրա գտնված վաղահաս վարունգներին կարկուտը խփել է: Յեթե կարկուտ չլիներ կոլտնտեսությունը մեկ հեկտարից կհավաքեր ու կհանձներ 110 ցենտներ վարունգ, վաղահաս վարունգների համար ռահմանված սեզոնային գներով, իսկ կարկտից հետո կոլտնտեսությունը մեկ հեկտարից հավաքում է ընդամենը 80 ցենտներ և հանձնում ավելի ուշ ժամկետների գներով:

Այդ դեպքում վնասի հաշվարկը կլինի հետևյալը՝

Հավաքի ու հանձնման ժամկետը	Առանց կարկտի փառման			Կարկտի փառման հետևանքով		
	Ֆանակը ցենտներով	1 ցենտների գինը ուրբին.	Ընդհանուր գումարը ուրբիններով	Ֆանակը ցենտներով	1 ցենտների գինը ուրբին.	Ընդհանուր գումարը ուրբիններով
Հունիսի 1-ին տասնորյակը	10	50	500	—	—	—
Հունիսի 2-րդ տասնորյակը	30	30	900	2	30	60
Հունիսի 3-րդ տասնորյակը	30	20	600	20	20	400
Ոգոստոսի 1-ին տասնորյակը	30	10	300	30	10	300
Ոգոստոսի 2-րդ տասնորյակը	10	10	100	20	10	200
Ոգոստոսի 3-րդ տասնորյակը	—	—	—	8	10	80
Ընդամենը՝	110	—	2400	80	—	1040

Թերահավաքի արժեքը կկազմի 1360 ուրբ. (2400 - 1040): Այստեղից ել թերահավաքի տոկոսը հավասար կլինի՝

$$\frac{1360 \times 100}{2400} = 56,6 \text{ կամ կլսր թվով } 57$$

§ 64. Կարմիր յերեֆնուկի սերմանցներ, — Կարմիր յերեֆնուկի սերմանոցներ համարվում են՝

ա) Այդ կուլտուրայի հատուկ ցանքսերի տարածությունները սերմացույի համար, վորոնք նախատեսված են տնտեսության արտադրական պլանով, յեթե ճշտորեն նշված է դրանց ցանքսի տեղը (դաշտի №-ը, բրիգադը):

բ) Տարածություններ, վորոնք յերեֆնուկի ընդհանուր ցանքսից հատկացված են կարմիր յերեֆնուկի սերմանոցների համար:

Այն դեպքերում, յերբ մինչև տարերային աղետը յերեֆնուկի ցանքսի ընդհանուր տարածությունից սերմանոցներ չեն առանձնացվել, սերմանոցների տարածությունն ընդունվում է համաձայն կոլտնտեսության արտադրական պլանի, վորը համառված է շրջանային հողային բաժնի կողմից:

Յեթե կոլտնտեսության արտադրական պլանում չի նշված

սերմանոցները տարածությունը, այդ տարածությունը վորոշելու համար պետք է վերջնիկ կարմիր յերեքնուկի սերմանոցներ թողնելու վերաբերյալ այն պլանային առաջադրանքները, վորոնք հաստատվել են դարնանացանի պլանում շրջադրվումի նախագահության կողմից և իջեցվել են կոլտնտեսությանը:

Նման դեպքում սերմանոցների վնասված տարածությունը հաշվարկվում է յերեքնուկի ցանքի ընդհանուր տարածության համեմատականով:

Որինակ՝ կոլտնտեսությունն ունի 75 հեկտար յերեքնուկի ցանք: Ըստ արտադրական պլանի կոլտնտեսությունը պարտավոր է սերմանոցների համար առանձնացնել 15 հեկտար: Փաստորեն սերմանոցներն առանձնացված չեն յեղել: Յրտահարությունից տուժել է յերեքնուկի ցանքից 10 հեկտար:

Վնասված սերմանոցի տարածությունը վորոշում ենք համեմատականով՝

$$\begin{aligned} X:10 &= 15:75 \\ \frac{X=10 \times 15}{75} &= 2 \text{ *)} \end{aligned}$$

Այսպիսով ցրտահարված 10 հեկտար յերեքնուկի ցանքից վնասը յենթակա յե վճարման 2 հեկտար սերմանոցի համար:

Կարմիր յերեքնուկի սերմանոցների վնասների վորոշումը կատարվում է նույն կարգով, ինչպես վոր մյուս գյուղատնտեսական հուկտերաներինը:

Ընտրում են փորձնական տարածություններ և այդ տարածությունների վրա յեղած բույսերը քաղում և խառնել են կապում: Խառնելը կախում է յերեքնուկի գլխիկները չորացնում են: Այնուհետև կատարվում է սերմերի առանձնացում: Ստացված սերմացուն կշռվում է:

Նույն ձևով վորոշվում է նույնանման, բայց չվնասված հողատարի բերքի քաղը: Վնասված և չվնասված հողատարի բերքի միջև յեղած տարբերությունն էլ կկազմի տարբերային աղետի հետևյալնքով առաջացած բերքի կորուստը:

Յեթե կարմիր յերեքնուկի սերմանոցներն ամբողջովին փչացել են այն տարբերային աղետից, վորից առաջացած վնասների համար սահմանված է Պետապի պատասխանատվություն և այդ դեպքում ապահովագրվողին պետք է վճարել ապահովագրական վարձատրություն լրիվ նորման, թեկուղ ապահովագրողը

*) «X» տառով նշանակված է սերմանոցի վնասված տարածությունը:

յերկրորդական արտադրանքի (յերեքնուկի խոտի, տիմֆեյի վեկայի խոտի կամ սերմի) ոգտագործումից վորոշ յեկամուտ ստացած լինի: Յերեքնուկի բերան քաղվող յիկեքնուկի նկատմամբ, յերբ յերկրորդ քաղը թողնվում է սերմացու ստանալու համար և այդ յերկրորդ քաղը փչանում է, իսկ առաջին քաղը (վորպիս խոտ) տվել է բերք, ապահովագրական հատուցումը հաշվարկվիս պետք է առաջին քաղի խոտի արժեքը հաշվի առնվի:

Որինակ՝ Սերմացույի համար թողնված յերեքնուկի յերկրորդ քաղը կարկտից ամբողջովին փչացել է: Յերեքնուկի առաջին քաղը տվել է 25 ցենտներ խոտ, ցենտները 7 ուրբով, ընդամենը 175 ուրբի գումարով:

Ընդունենք, վոր չվնասված հողամասից հավաքվել է 25 ցենտներ խոտ, ցենտները 7 ուրբով—175 ուրբի գումարով և 2 ցենտներ սերմ, ցենտները 650 ուրբով—1300 ուրբի գումարով, իսկ ընդամենը՝ 1475 ուրբ գումարով:

Վնասը յրամով հավասար կլինի՝ 1475—175 ուրբ=1300 ուրբ:

Վնասվածության տոկոսը կկազմի՝

$$\frac{1300 \times 100}{1475} = 88,1 \text{ կամ կորացրած } 88$$

Բազմամյա ոգտագործման համար ցանված յերեքնուկի նկատմամբ Պետապը պատասխանատվություն է կրում այն բոլոր ժամանակի տեվողությանը, վորը նախատեսված է յերեքնուկի ոգտագործման համար տուժած տնտեսության ցանքաշրջանառությամբ:

VIII. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻՆ ՎՃԱՐՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐՍՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

§ 65. Ապահովագրական տեսուչը, վնասված տարածության չափը, ապահովագրված ցանքերի կամ տնկիների վնասման կամ փչացման պատճառներն ու բերքի վնասվածության տոկոսը վորոշելուց հետո, պետք է կատարի ապահովագրվողին վճարվելիք գումարի հաշվարքում:

Պարտադիր ապահովագրությամբ ապահովագրվողին վճարվելիք գումարը վորոշվում է հետևյալ կազմով. սկզբում հաշվվում է այն գումարը, վորը պետք է վճարվի ապահովագրվողին մեկ հեկտարի համար: Դրա համար տվյալ կուկտերայի մեկ հեկտարի համար սահմանված ապահովագրական վարձատրության նորմա-

յից պետք է այնպիսի տոկոս վերցնել, ինչ տոկոսով, վոր բերքը ֆնաովել է: Այնուհետև ստացված գումարը պետք է բազմապատկել ֆնաոված տարածության հեկտարների քանակի վրա:

Որինակ՝ Մեկ հեկտար ցորենի ապահովագրական պատասխանատվության նորման 60 ուրլի յի: Վնասված է 100 հեկտար: Բերքը ֆնաովել է 25% -ով: Այդ դեպքում ապահովագրվողին վճարվելիք գումարը մեկ հեկտարի համար կկազմի 60 ուրլու 25% -ը կամ 15 ուրլի, իսկ 100 հեկտարի համար՝ $15 \times 100 = 1500$ ուրլի:

§ 66. Յեթե ֆնաոված տարածության մեկ հեկտարի բերքի արժեքը մինչև այն տարերային աղետը, վորից առաջացած ֆնասների համար Պետապը պատասխանատվություն է կրում, ցածր է մեկ հեկտարի ապահովագրական պատասխանատվության նորմայից, ապա ապահովագրվողին վճարվելիք գումարը, հաշվարքվում է, յեղնելով բերքի իրական արժեքից, հաշված պետական մթերման գներով:

Որինակ՝ Վարսակի ցանքսերն սկզբում ֆնաովել են ֆնասատուններից, իսկ հետո կարկտահարությունից: Ընդունենք, վոր մեկ հեկտար վարսակի ապահովագրական վարձատրության նորման հավասար է 60 ուրլու, իսկ մեկ ցենտներ վարսակի մթերման գինը՝ 5 ու 50 կոպեկի: Վորոշված է՝ 1) վոր չֆնասված (վոչ ֆնասատուններից է վոչ էլ կարկտից) հողամասի վրա մեկ հեկտարի բերքը հավասար է 10 ցենտների. 2) վոր բերքը մինչև կարկտահարությունը ֆնաոված է յեղել ֆնասատուններից 20% -ով, է 3) վոր ֆնասատուններից ու կարկտահարությունից ֆնասված հողամասի վրա մեկ հեկտար վարսակի բերքը հավասար է 5 ցենտների: Վնասատուններից առաջացած բերքի կորուստը կազմում է 20% կամ՝

$$\frac{10 \times 20}{100} = 2 \text{ ցենտների մեկ հեկտարից}$$

Հետևապես, կարկտից բերքը ֆնաոված է յեղել 1 հեկտարից 8 ցենտներով (10 ց.—2 ց.=8 ց.): Բերքի կորուստը կարկտից հավասար է՝ 8 ց.—5 ց.=3 ց. կամ տոկոսներով՝

$$\frac{3 \times 100}{8} = 37,5 \text{ կամ կլորացրած 38}$$

Վնասատուններից ֆնասվելուց հետո, 1 հեկտար վարսակի

բերքի արժեքն այս թվերով է արտահայտվում՝ $8 \times 5,50 = 44$ ուրլ, այսինքն ապահովագրական պատասխանատվության նորմայից պակաս:

Ապահովագրվողին վճարվելիք գումարը հաշվարքում ենք, յեղնելով բերքի վաստացի արժեքից մինչև կարկտահարությունը՝

$$\frac{44 \times 38,0}{100} = 16,72 \text{ ուրլի հեկտարին:}$$

§ 67. Յեթե միևնույն ցանքսը կյենթարկվի կրկնակի տարերային աղետի և առաջին տարերային աղետի ֆնասի վարձատրությունն արդեն վճարված է, ապա յերկրորդ աղետի ապահովագրական հատուցումը հաշվարկելիս պետք է յեղնել վոչ թե ապահովագրական պատասխանատվության լրիվ նորմայից, այլ այդ նորմայի մնացորդից (դուրս դալով առաջին տարերային աղետի պատճառած ֆնասի համար վճարված գումարը):

Որինակ՝ Առաջին կարկտահարությունը տեղի յի ունեցել ցորենի կաթնային հատունացման շրջանում է ֆնասը վորոշված է 30%: Ընդունենք վոր 1 հեկտար ցորենի ապահովագրական պատասխանատվության նորման ըստ կոպարային ապահովագրության հավասար է 60 ուրլու: Այդ դեպքում տնտեսությանը յուրաքանչյուր տուժած հեկտարի համար պետք է վճարել՝

$$\frac{30 \times 60}{100} = 18 \text{ ուրլի}$$

Այդ գումարը վճարելուց հետո ցորենի բերքահավաքի ժամանակ տեղի յի ունեցել յերկրորդ կարկտահարությունը: Առաջին կարկտահարությունից հետո մնացած բերքի ֆնասվածության տոկոսը վորոշված է 40% -ի չափով: Յերկրորդ կարկտահարության ապահովագրական հատուցումը հաշվարքելիս պետք է յեղնել վոչ թե 1 հեկտարին 60 ուրլու հաշվից, այլ միայն 42 ուրլուց (60 ուրլ.—18 ուրլ.=42 ուրլ.):

Յուրաքանչյուր տուժած հեկտարի համար տնտեսությանը պետք է վճարել՝

$$\frac{40 \times 42}{100} = 16,8 \text{ ուրլի}$$

§ 68. Վնասների վնասումը կրկնացանի ժամանակ: ա) Յեթե գյուղատնտեսական կուլտուրաների ցանքսերը տարերային

ադետի հետեւիանքով այնքան ուժեղ են ֆլաթիւ, վոր անհրա-
ժեշտ ե կրկնացան կամ վերացան կատարել և տարվա այդ ժա-
մանակում հնարավոր ե կրկնացան կամ վերացան կատարելը, ապա
ապահովագրվողին վճարվում ե փչացած սերմացույի կամ սա-
ծիլի և կրկնացանի վրա կատարված աշխատանքների (նոր տն-
կման, վերացանքսի, վերասածիլման) արժեքը: Այս կարգը տա-
րածվում ե բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների վրա:

Փչացած տեսակավոր սերմացուների համար վճարվում ե
տեսակավոր սերմացույի մթերման գներով:

Սածիլների արժեքը վորոշվում ե ըստ հողային մարմին-
ների դնացուցակների:

Կրկնացանի համար կատարված ծախսերի արժեքի նորմա-
ները պետք ե մշակվեն Պետալի մարզային, յերկրային և ԱԽՍՀ
վարչութունների կողմից և հայտնվեն շրջանային ապահովագրա-
կան տեսչութուններին:

Ծախսերի և աշխատանքի արժեքի նորմաները վերցվում ե
Պորտնտեսութունատի սիստեմի խորտնտեսութունների արտա-
դրական պլաններով սահմանվածը, իսկ դրանց բացակայության
դեպքում՝ Հողօգտագործի կամ Սննդարդյունաբերության օրգանի-
մատի սիստեմի խորտնտեսութուններից: Պորտնտեսութունների
բացակայության դեպքում, պետք ե վերցնել Մեքսիկա-արեւել-
աօրային կայանների համար սահմանված ծախսերի արժեքը:

Պորտնտեսութունների վերադիր ծախսերը (ընդհանուր ար-
տադրական, ընդհանուր տնտեսական) չի մտցվում կրկնացանի
վրա տարված աշխատանքների արժեքի մեջ:

Աշխատանքի վճարումը, կրկնացանի համար, պիտի կատար-
վի յեւնելով նրանից, թե փպտորեն ինչպիսի արտադրական մի-
ջոցներով ե կատարվել կրկնացանը (վերացանը), մեքենայական
(տրակտորային) թե ձիու ուժով:

բ) Կրկնացանի ֆլաթի համար ապահովագրական հատու-
տուցում վճարվում ե նրանից հետո, յերբ ապահովագրական
տեսչի կամ գյուղական խորհրդի կողմից պարզված էլինի, վոր
կրկնացանքը կատարված ե:

գ) Յեթե, չնայած կրկնացանի անհրաժեշտության և ըստ
տարվա ժամանակի նման կրկնացանի հնարավորության, ապա-
հովագրվողը կրկնացան չի կատարում, ապա ֆլաթը չի հատուց-
վում:

Յեթե ցանքերն ամբողջովին փչացել են, բայց կրկնացան

կատարելն ըստ տարվա ժամանակի, ըստ ցանքաշրջանառության
պայմանների, ըստ յեղանակի պայմանների կամ սերմացու չը-
լինելու համար անհնարին ե, ապահովագրվողին վճարվում ե պար-
տադիր կոպարային ապահովագրության ապահովագրական պա-
տասխանատվության լրիվ նորման:

Կրկնացան կատարելու անհնարինությունը պետք ե հա-
տատված էինի շրջանային հողային բաժնի տեղեկանքով:

Յեթե մասնակի ֆլաթված ցանքները նշանակված են կրկ-
նացանի, բայց հենց նոր մատնանշված պատճառներով կրկնա-
ցան չի կատարված ու բույսերի անֆլաթ մնացած մասը թողնված
ե հասունացման, ապա ֆլաթի չափի վորոշումը կատարվում ե սո-
վորական կարգով բերքահավաքի նախորդակներում:

դ) Նոր ցանված կուլտուրան ապահովագրված ե համարվում
կոպարային ապահովագրությամբ, այդ կուլտուրայի համար սահ-
մանված ապահովագրական պատասխանատվության նորմայի
չափով:

յե) Կրկնացանի ժամանակ ֆլաթների հատուցման վերը նշ-
ված կարգը էլիտովում ե այդ դեպքերում, յերբ ցանքսի կո-
րուստն առաջացել ե այնպիսի տարերային աղետներից, վորոնց
պատճառած ֆլաթների համար սահմանված ե ապահովագրական
պատասխանատվություն: Իսկ յեթե ցանքների փչացումը կամ
ֆլաթվելն առաջացել ե միաժամանակ և այլ պատճառներից, այն
ժամանակ կրկնացանի ֆլաթները հատուցվում են միայն այն
տարերային աղետների պատճառած փչացումների և ֆլաթների
չափով, վորոնց համար սահմանված ե ապահովագրական պա-
տասխանատվություն:

Որինքսկ՝ Յեթե ցորենի ցանքը ֆլաթատուներից ֆլաթել
ե 40% -ով և կարկտահարությունից 60% -ով, ապա ապահովա-
գրվողին վճարվում ե փչացած սերմացույի ու կրկնացանի վրա
թափված աշխատանքների արժեքի 60 տոկոսի չափով:

զ) Ապահովագրական հատուցման (սույն պարագրաֆի «Գ»
կետը) լրիվ նորման, նույնպէս և փչացած սերմերի ու կրկնա-
ցանքսի աշխատանքների ամբողջ արժեքը վճարվում ե ապահո-
վագրվողին միայն այն դեպքում, յերբ ծիւրն ամբողջությամբ
գուր ե յեկել: Յեթե ծիւրը միայն մասնակիորեն ե յերե-
վացել, որինակ՝ 20—30% կամ 40% և փչացել են, ապա կրկնացա-
նի դեպքում ապահովագրվողին վճարվում ե այն գումարի 20,30

կամ $40\frac{0}{10}$ -ի համեմատ, վորպիսին նրան կվճարվեր նորմալ ծի-
ւերի լրիվ փչացման դեպքում:

կ) Կրկնացանի ժամանակ ֆլասների վճարման բոլոր դեպ-
քերում վճարվելիք ապահովագրական հատուցումը չպետք է դե-
րազանցի կոպարային ապահովագրությամբ տվյալ կուլտուրա-
յի համար թահմանված ապահովագրական պատասխանատվու-
թյան նորմայից:

ը) Աշնանը ցանված զարնանացան կուլտուրան կրկնացա-
նելու դեպքում ապահովագրվողին վճարվում է ապահովագրական
վարձատրության լրիվ նորման, թահմանված միութենական հա-
նրապետության կառավարության վորոշմամբ այդ տեսակի ապա-
հովագրության համար:

թ) Յեթե կրկնացանն այնպիսի պատճառների կամ աղետ-
ների հետեւում ընկնի և կատարված, վորոնց համար Պետապը պա-
տասխանատվություն չի կրում, կրկնացանի ժամանակ հերկված
կանգուն կանաչ մասսան (տրավասոոյ) վճարման յենթակա չէ:

Յեթե կրկնացանը կատարվել է միաժամանակ այն աղետնե-
րից, վորոնց համար Պետապը պատասխանատվություն է կրում
և այն աղետներից, վորոնց համար պատասխանատվություն
չի կրում այդ դեպքում հերկված կանգուն մասսայի արժեքը, ան-
կախ չափից վճարվում է:

IX Ապահովագրվողին վնարվելիք գումարի հաշվարկումն ըստ
կամավոր (գերկոպերային) ապահովագրության

§ 69 Կամավոր (գերկոպերային) ապահովագրությամբ ա-
պահովագրվողին վճարվելիք գումարի հաշվարկումը կատարվում
է (բացառությամբ կրկնացանի ժամանակ վճարվելիք ֆլասների)
ճիշտ այնպես, ինչպես պարտադիր կոպարային ապահովագրու-
թյան դեպքում (§ 65—67):

Որինակ 1. Կոլտնտեսության 25 հեկտար տարածության
բամբակի ցանքը ֆլասվել է: Բերքի ֆլասի չափը $40\frac{0}{10}$ է: Բամ-
բակն ապահովագրված է կամավոր (գերկոպերային) ապահովա-
գրությամբ 1 հեկտ. 600 ուրբլով: Այս դեպքում, կամավոր (գեր-
կոպերային) ապահովագրությամբ ապահովագրվողին վճարվելիք
գումարը կկազմի 1 հեկտարի համար 600 ուրբլով $40\frac{0}{10}$ -ը կամ
240 ուրբլի, իսկ 25 հեկտարի համար (240×25) 6000 ուրբլի:

Որինակ 2. Կոլտնտեսության 25 հեկտար տարածության
բամբակի ցանքը կարկտից ֆլասվել է $40\frac{0}{10}$ -ով: Բամբակն ապա-

հովագրված է պարտադիր ապահովագրությամբ 1 հեկտարը 220
ոուբլով և կամավոր ապահովագրությամբ 1 հեկտարը 780 ոուբ-
լով, ընդամենը 1000 ոուբլով: Մեկ ցենտներ բամբակի մթեր-
ման գինը՝ 100 ոուբլի յե: Չֆլասված հողամասում 1 հեկտարի
բերքը հավասար է 8 ցենտների:

Այդ դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում
է վոչ թե լրիվ ապահովագրական գումարից 1 հեկտարի համար
1000 ոուբլով հաշվով, այլ չֆլասված հողամասի բերքի արժեքից՝
 $8 ց. \times 100 ոուբ. = 800 ո.$ մեկ հեկտարի համար:

$$\frac{25 \times 800 \times 40}{100} = 8000 \text{ ոուբլի}$$

Այդ գումարը պարտադիր ու կամավոր ապահովագրություն-
ների միջև բաշխվում է հետևյալ կերպ՝

Կոպարային ապահովագրության բաժին է ընկնում՝

$$\frac{25 \times 220 \times 40}{100} = 2200 \text{ ոուբլի}$$

Կամավոր ապահովագրության բաժինը—ապահովագրական
հատուցման մնացած գումարը՝ $8000 - 2200 = 5800$ ոուբ. կամ

$$\frac{25 \times 580 \times 40}{100} = 5800 \text{ ոուբլի}$$

§ 70. Յեթե ապահովագրվողի տնտեսության մեջ տվյալ
կուլտուրայի ընդհանուր տարածությունը գուրո կգա ավելին,
քան կամավոր ապահովագրությամբ այդ կուլտուրայի ապահո-
վագրված տարածությունը, ապա կամավոր ապահովագրությամբ
մեկ հեկտարի ապահովագրական պատասխանատվությունը պա-
կասում է կուլտուրայի ընդհանուր ցանքային տարածությունն
ավելանալուն համապատասխանորեն:

Նման դեպքերում ապահովագրական պատասխանատվու-
թյան չափի վորոշումը կատարվում է ապահովագրական պա-
տասխանատվության ընդհանուր գումարը ցանքի փառացի
տարածության վրա բաժանելու միջոցով:

Որինակ՝ Կոլտնտեսությունը կամավոր կարգով ապահովա-
գրել է 200 հեկտար բամբակ, յուրաքանչյուր հեկտարը 600 ոուբ-
լով, կամ 120000 ոուբլի ապահովագրական պատասխանատվու-
թյան ընդհանուր գումարով:

Ճանքսի վառարարի տարածութիւնը 225 հեկտար եւ Լրացուցիչ տարածութեան մասին կոլտնտեսութիւնը շրջանային ապահովագրական տեսչին չի հայտնել և այդ տարածութիւնը չի ապահովագրուել։ Այդ դեպքում գերկալարային ապահովագրութեամբ 1 հեկտարի ապահովագրական պատասխանատվութիւնը կկազմէ՝

$$120000 : 225 = 533,3 \text{ ռուբլի.}$$

§ 71. Կոպարային և կամավոր ապահովագրութեամբ ապահովագրված գյուղատնտեսական կուլտուրաները կրկնացանելիս, ֆնասների վճարումը կատարվում է հետևյալ հիմունքներով՝

Հենց նույն կուլտուրայով կամ վոչ ավելի պակաս թանգարժեք կուլտուրայով կրկնացանելիս (վերացանելիս) ապահովագրողին վճարվում է փչացած սերմերի կամ տնկիների արժեքը և կրկնացանի (նոր տնկման, վերացանի, վերատնկման) վրա թափված աշխատանքների արժեքը։

Նոր ցանված կուլտուրան համարվում է ապահովագրված կոպարային ապահովագրութեամբ, — նոր ցանված կուլտուրայի համար սահմանված ապահովագրական պատասխանատվութեան նորմայով, և կամավոր ապահովագրութեամբ — բայն ապահովագրական գումարով, վորով տուժած կուլտուրան (կրկնացանված, վերացանված) ապահովագրված է յեղել։

Յեթե ապահովագրվողը նշված պայմաններով չի ցանկանում նոր ցանված կուլտուրան կամավոր ապահովագրութեան մեջ թողնել, ապա կամավոր ապահովագրութիւնը պետք է չեղյալ համարել և փչացած կուլտուրայի կամավոր ապահովագրութեան ապահովագրական վճարումները հետ վերադարձնել ապահովագրվողին։

Յեթե տվյալ կուլտուրայով կրկնացանելն ըստ տարվա ժամանակի հնարավոր չէ և տնտեսութիւնը հարկադրված է կրկնացան կատարել ավելի պակաս արժեք ունեցող կուլտուրայով, ապահովագրվողին վճարվելու յե փչացած սերմերի ու կրկնացանի աշխատանքների արժեքը և բացի այդ — կամավոր ապահովագրութեամբ ապահովագրական հատուցում, ապահովագրական ընդհանուր գումարի (կոպարային ու կամավոր ապահովագրութեան գծով) և նոր ցանված կուլտուրայի յեկամուտի միջև յեղած տարբերութեան գումարի չափով, ընդվորում այդ յեկամուտը հաշվարկվում է ըստ պլանային բերքատվութեան և պետական մթերման գների։

Որի՞նք և՛ Աշնանացան ցորենն ապահովագրված է կոպարային ապահովագրութեամբ 1 հեկտարը 80 ռուբլով և կամավորով — 1 հեկտարը 60 ռուբլով, իսկ ընդհանուր ապահովագրական գումարով — 1 հեկտարը 140 ռուբլով։

Այդ ցորենը ցրտահարութիւնից լիովին փչացել է և կրկնացան է արված գարնանացան ցորենով, վորից ստացվելիք յեկամուտը 1 հեկտարից հավասար է 120 ռուբլու։ Փչացած սերմերի և կրկնացանի աշխատանքների արժեքն ընդունենք, վոր հավասար է 1 հեկտարին 50 ռուբլու։ Այդ դեպքում ապահովագրվողին վճարվելու յե՝

$$50 + (140 - 120) = 50 + 20 = 70 \text{ ռուբլի.}$$

Այն հարցը, թե ինչպիսի կուլտուրայով պետք է կրկնացանը կատարվի, վորոշում է կոլտնտեսութիւնը հողային մարմինների հետ միասին։

§ 72. Ավելի պակաս արժեք ունեցող կուլտուրայով վերացան (պոգսել) կատարելու դեպքում, ապահովագրվողին բացի փչացած սերմերի և վերացանի աշխատանքի արժեքից, վճարվում է նաև կամավոր ապահովագրութեամբ՝ ապահովագրական գումարի այն տոկոսը, վորը հավասար է ֆնասվածութեան տոկոսին։

Որի՞նք և՛ Աշնանացան ցորենը, վոր ապահովագրված է 80 ռուբլով պարտադիր ապահովագրութեամբ և 60 ռուբլով կամավոր ապահովագրութեամբ, ֆնասվել է 30% -ով և վերացանված է գարով, վորի 1 հեկտարից ստացված յեկամուտը հավասար է 70 ռուբլու։ Ընդունենք, վոր վերացանի արժեքը հավասար է 20 ռուբլու։ Այդ դեպքում ապահովագրվողին բացի 20 ռուբլուց վճարվելու յե նաև 60 ռուբլու 30% -ը, կամ 18 ռուբլի։

$$\text{Ընդամենը վճարվելու յե՝ } 20 + 18 = 38 \text{ ռուբլի.}$$

§ 73. Նոր ցանված կուլտուրան ապահովագրված է համարվում կոպարային ապահովագրութեամբ, նրա համար սահմանված ապահովագրական պատասխանատվութեան նորմայով և կամավոր ապահովագրութեամբ — ապահովագրական գումարի, վորով ապահովագրված է յեղել ֆնասված (վերացանված) կուլտուրան և նրա համար կամավոր ապահովագրութեամբ վճարված ապահովագրական հատուցված գումարի միջև յեղած տարբերութեան չափով։

Ինչպիսի յերեվում է § 71-ում բերված որինակից, վճարում

կատարելուց հետո նոր ցանված կուլտուրան կամավոր ապահովագրութեամբ ապահովագրված կհամարվի հետևյալ չափով՝

60—20=40 ուերլու մեկ հեկտարին:

§ 74. Յեթե կրկնացանի աշխատանքների արժեքը բարձր է կոպարային ապահովագրութեան ապահովագրական վարձատրութեան նորմայից, անհրաժեշտ է պակաս գումարը վճարել ի հաշիվ կամավոր ապահովագրութեան:

§ 75. Կոպարային և կամավոր ապահովագրութեամբ կրկնացանի ֆլառների վճարման բոլոր դեպքերում, վճարվելիք ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել կոպարային և կամավոր ապահովագրութեան ապահովագրական ընդհանուր գումարից:

X. ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐԻ ԿԱԶՄԵԼԸ ՅԵՎ ՀԱՍՏԱՏԵԼԸ

§ 76. Վնասված ցանքների գնահատման ժամանակ ստացված բոլոր տեղեկությունները գրանցվում են ԽՍՀՄ ֆինտոդկոմատի կողմից սահմանված ֆլառների վերաբերյալ ձևի ակտերում: Վնասների վերաբերյալ ակտը կազմվում է յուրաքանչյուր կոտանտեպուլյան համար, իսկ կոտանտեպուլաների և մենատնտես գյուղացիների տնտեսություններում՝ ֆլառներ լինելու դեպքում՝ ամեն մի բնակիչի վայրի համար առանձին, ընդվորում ֆլառները հաշվարկվում են ըստ յուրաքանչյուր տնտեսությունից:

§ 77. Վնասների վերաբերյալ ակտերը կազմվում են ըստ յուրաքանչյուր տեսակի պատահականատվութեան համար առանձին՝ 1) կարկտահարությունից, տարափից ու փոթորկից, 2) թրջումից, փթումից, ցրտահարությունից, մրսումից ու հեղեղումից, 3) կարկտահարությունից, տարափից, փոթորկից, կրակից արմատի վրա, յերաշտից, թրջումից, փթումից, ցրտահարությունից, մրսումից և հեղեղումից:

Դրա համար յեթե որինակ՝ աշնանացան ցորենը ձմրան ընթացքում տուժել է թրջումից, իսկ գարնանը մրսումից, ապա պետք է կազմել միայն մեկ ակտ:

Ճիշտ այնպես ել մեկ ակտ է կազմվում, յեթե որինակ՝ ծխախոտը սկզբում տուժել է յերաշտից, իսկ հետո կարկտահարությունից: Իսկ, յեթե, որինակ, աշնանացան ցորենը տուժել

է սկզբում ցրտահարությունից ու հետո կարկտահարությունից, անհրաժեշտ է կազմել յերկու ակտ՝ 1) ցրտահարութեան և 2) կարկտահարութեան: Այդ դեպքում կարկտահարութեան ակտի (№№ 117 և 118 ձևերում) 4-րդ կետում անհրաժեշտ է համապատասխան նշում անել:

§ 78. Այն դեպքում, յերբ ֆլառվածութեան տարբեր աստիճանի (տարբեր տոկոսի) հողամասեր կան, ֆլառի վերաբերյալ ակտում, ֆլառվածութեան տոկոսները գրանցվում են յուրաքանչյուր հողամասի համար առանձին: Այնպեսու դուրս է բերվում ֆլառվածութեան միջին կշռային տոկոսը, ինչպես նշված է սույն հրահանգի § 37-ում, իսկ ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է ամբողջ տուժած դաշտի համար, յեկնելով ֆլառվածութեան միջին կշռային տոկոսից:

Այդպիսի հաշվարկ թույլատրելի յե այն դեպքում, յերբ մինչ տարեբային աղետը յինթադրական բերքի արժեքն ապահովագրական վարձատրութեան նորմայից ցածր չէ: Այն հողամասերում, վորտեղ մինչ տարեբային աղետը յինթադրական բերքի արժեքը ցածր է ապահովագրական նորմայից, և բացի այդ տարբեր է, անհրաժեշտ է ապահովագրական հատուցման հաշվարկը կատարել առանձին:

Վնասվածութեան տոկոսները գրվում են ակտում մինչև մեկ միավորը կլորացրած, ընդվորում տասնորդական և հարյուրերորդական մասերը մինչև 0,5 տոկոսը դեն է գցվում, իսկ սկսած 0,5%-ից, ընդունվում է մեկ միավորի տեղ:

Որինակ՝ Յեթե ֆլառվածութեան տոկոսը հաշվարկված է 15,49, ապա ակտում գրանցվում է 15 տոկոս, յեթե ֆլառվածութեան տոկոսը հաշվարկված է 15,51, ապա ակտում գրանցվում է 16 տոկոսի ֆլառվածութեան:

§ 79. Ամբողջ գյուղի կոտանտեպուլաների և մենատնտես գյուղացիների տնտեսությունների գծով մեկ ակտ կազմելու դեպքում, անհրաժեշտ է յուրաքանչյուր տնտեսությունից ֆլառված հողամասերը զիտել առանձին, ինչպես նաև առանձին նշել ֆլառվածութեան տոկոսը, ըստ ամեն մի տնտեսությունից:

§ 80. Շրջանային ապահովագրական տեսչի կողմից կազմված ակտերը ստուգվում են ապահովագրական (շրջանային, քաղաքային) ավագ տեսչի կողմից և ներկայացվում շրջանային ապահովագրական հանձնաժողովին հաստատելու համար:

§ 81. Յեթե ֆլառների վերաբերյալ ակտը կազմվելու, կպարզվի,

վոր առանձին կոլտնտեսականներ և մենատնտես գյուղացիներ իրենց ապահովագրված ցանքերի ֆնաման կամ փչացման մասին ժամանակին չեն հաղորդել, ապա ապահովագրական տեսուչը պետք է հաշվարկի այդպիսի տնտեսությունների ֆնամի չափը, այն մտցնելով ակտի մեջ, նշելով ֆնամի մասին հայտը ժամանակին չներկայացնելու պատճառը:

§ 82. Վնասի վերաբերյալ ակտը ստորագրվում է ապահովագրական տեսչի, գյուղատնտեսի, ակտը կազմելու գործին մասնակցելու համար հրավերված անձնավորությունների, եքսպերտի (յեթե նա կանչված է ակտը կազմելու համար) կողմից, ինչպես նաև ապահովագրվողի կողմից:

Ծանոթություն.—Այն դեպքում, յերբ ամբողջ գյուղի կոլտնտեսականների և մենատնտեսների համար կազմվել է մեկ ակտ և բոլոր ապահովագրվողներից ստորագրություններ հավաքելը տեխնիկապես դժվար է, ֆնամի վերաբերյալ ակտը ստորագրվելու յե պետապի տեսչի, գյուղատնտեսի, ակտի կազմելուն մասնակցելու համար հրավիրված անձնավորությունների կողմից, ինչպես նաև գյուղի մի քանի վստահելի քաղաքացիների կողմից: Վնասների մասին ակտը կազմելուն մասնակցող անձանց միջև յեղած տարաձայնությունները և ապահովագրվողի առաջ-կությունները պետք է մտցնել ակտի մեջ:

§ 83. Պարտագիր կոպարային և կամավոր (գերկոպարային) ապահովագրությունամբ ֆնամներ հատուցելիս կազմվում է մեկ ակտ, բայց ֆնամների հաշվարկումը տրվելու յե առանձին տողերով: Վնասների վերաբերյալ ակտին պետք է կցված լինի կամավոր (գերկոպարային) ապահովագրության ապահովագրական դիմումի քաղվածքը (տես § 13):

§ 84. Պետապի մարդային, յերկրային և հանրապետական վարչությունները պարտավոր են գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրական ֆնամների վորոշման և հատուցման աշխատանքի վրա կազմակերպել ուշադիր հսկողություն: Այդ հսկողությունը պետք է կատարվի տեղերը մեկնելով (մասնավորապես այն շրջանները, վորտեղ նկատվում է բարձր ֆնամատվություն): Առանձին դեպքերում թույլատրվում է հսկողություն սահմանել տեղերից փաստաթղթերը պահանջելու միջոցով: Գերլիմիտային ֆնամների վորոշման հսկողության համար, Պետապի մարդային, յերկրային վարչությունները, ինչպես նաև

Պետապի ԱնՍՀ և Միութենական հանրապետությունների վարչությունները պետք է գերլիմիտային ֆնամների համար պահեն հատուկ մատյաններ: Այդ մատյաններում պետք է մատնանշվեն գերլիմիտային ֆնամների վերաբերյալ հիմնական տվյալները:

1) Մարզը, յերկրամասը, ԱնՍՀ-ը և շրջանը, ուր տեղի յե ունեցել ֆնամները:

2) Տուժած կուլտուրաների անունները:

3) Տուժած տարածությունը, վորը նշված է գերլիմիտային ֆնամի մասին յեղած դիմումի մեջ և ֆնամի որիյենտիր գումարը:

4) Ինչպիսի տարերային աղետից են տուժել գյուղատնտեսական կուլտուրաները:

5) Գերլիմիտային ֆնամների վերաբերյալ հաղորդումների ստացման թվագրությունը:

6) Յերբ և ում է հանձնարարված ֆնամների վորոշման աշխատանքը:

7) Գերլիմիտային ֆնամի աշխատանքի համար Պետապի մարդային, յերկրային ու հանրապետական վարչության ներկայացուցչի վայր մեկնելու ժամանակը:

8) Այդ ներկայացուցչի վերադառնալու ժամանակը, կամ ակտերի ստացման ժամանակը, Պետապի մարդային (յերկրային) կամ հանրապետական վարչության կողմից:

9) Վնասի վերաբերյալ Պետապի մարդային (յերկրային) կամ հանրապետական վարչության վորոշումը:

10) Հաստատված է վճարման համար՝ ա) կոպարային ապահովագրությամբ (տարածությունը և գումարը), բ) գերկոպարային ապահովագրությամբ (տարածությունը և գումարը), գ) ընդամենը (գումարը):

11. Քննված և ֆնամները հաստատված նյութերը վերադարձնելու թվագրությունը,

12. Նշումներ նյութերը վերադառա ապահովագրական որդաններին ուղարկելու և ստանալու մասին:

XI. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԻ ՎՈՐԱՇՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅՈՒՄ ՅԵՂԱԾ ՀԻՄՆԱՐ-ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՐԱՆՅ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏԵՎՈՂ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆԶՊԵՍ ՆԱՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ, ՊՐՈՖԵՍՍՈՐՆԱԼ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

§ 85. Հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսություններում գյուղատնտեսական կուլտուրաների փաստերը ըստ ապահովագրության վորոշմում ու հատուցվում են սույն հրահանգի համաձայն:

Ապահովագրական հատուցումը կրկնացանի (վերացանի, վերատնկման) դեպքում հաշվարկվում է այնպես, ինչպես նշված է սույն հրահանգի § 71-ում և 72-ում, ընդվորում նոր ցանված (վերացանված) կուլտուրան համարվում է ապահովագրված ապահովագրական գումարի, վորով ապահովագրված է յեղել տուժած (վերացանված) կուլտուրան և նրա համար վճարված ապահովագրական հատուցման միջև յեղած տարբերության չափով:

Որի և Կ Կոոպերատիվ կազմակերպության, մեկ հեկտարը 150 ուրբով ապահովագրված աշնան ցորենի ցանքսերը ցրտահարությունից ամբողջովին փչանալով վերացանված են գարնանացան ցորենով, վորի 1 հեկտարի յեկամուտը հաշվարկված է 120 ուրբի:

Ընդունենք, վոր փչացած սերմերի ու կրկնացանի աշխատանքների արժեքը հաշվված է 1 հեկտարին 50 ուրբի: Ապահովագրվողին պետք է վճարել՝

$$50 \text{ ուրբ.} + (150 \text{ ու.} - 120 \text{ ու.}) = 50 \text{ ու.} + 30 \text{ ու.} = 80 \text{ ու.}$$

Նորից ցանված կուլտուրան—գարնանացան ցորենն ապահովագրված է համարվելով՝

$$1 \text{ հեկտ. } 150 \text{ ուրբ.} - 80 \text{ ուրբ.} = 70 \text{ ուրբ.} \text{ չափով:}$$

§ 86. Կամավոր ապահովագրությամբ փաստերի վճարման բոլոր դեպքերումն էլ վճարվելիք ապահովագրական հատուցումը չպետք է գերազանցի ապահովագրական գումարից:

§ 87. Սույն հրահանգը հրապարակվելուց հետո վերացվում

են ԽՍՀՄ ՖԺԿ-ի 1937 թ. մայիսի 24-ի №175 «գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրական փաստերի վորոշման և հատուցման մասին» հրահանգը և ԽՍՀՄ ՖԺԿ-ի 1938 թ. ապրելի 3-ի № 3306/32 կրկնացանի փաստերի վճարման մասին շրջաբերական—համակը:

ԽՍՀՄ ֆինանսների ժողովրդական կոմիսարի տեղակալ՝ Մ. ԲՈՂԻՐՈՎ

ԽՍՀՄ պետապի գլխավոր վարչության պետ՝ Ա. ՎԼԱՍՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1-ին. Ընդհանուր կանոններ	3
2-րդ. Վնասների մասին յեղած հայտարարությունների ցուցակագրումը Աշխատանքի ծրագրի կազմումը	4
3-րդ. Գյուղատնտեսական կուլտուրաների վնասների աղտերը յերբ և ում կողմից են կազմվում	5
4-րդ. Ցանքների փչացման կամ վնասման պատճառների վերոշումը	10
5-րդ. Տուժած տարածության հափի վերոշումը	17
6-րդ. Բերքի վնասվածության աստիճանի վերոշումը	19
7-րդ. Լրացուցիչ ցուցմունքներ հատուկ և տեխնիկական կուլտուրաների վնասները վերոշելու և հատուցելու մասին	27
Ծխախոտ	28
Մախորկա	38
Բամբակ	41
Այգիներ	45
Հատապտուղներ, խաղողի այգիներ	51
Բանջարանոցային կուլտուրաներ	54
Կարմիր յերեքնուկի սերմանոցներ	57
8-րդ. Ապահովագրվողին վճարվելիք գումարների հաշվարկումը ըստ պարտադիր կուպարային ապահովագրության	59
Վնասների վճարումը կրկնացանի դեպքում	61
9-րդ. Ապահովագրվողին վճարվելիք գումարի հաշվարկումը ըստ կա- մավոր (զերկուպարային) ապահովագրության	64
10-րդ. Վնասների վերաբերյալ աղտերի կազմելը և հաստատումը	68
11-րդ. Ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպու- թյունների անտեսություններում չգյուղատնտեսական կուլտու- րաների վնասների վերոշումը և հատուցումը	72



<< Ազգային գրադարան



NL0227244

352

43. 398

31673

upl

gm/